

627

ԽՈՀ ԼՈՒՍԱԳՈՎՐԾՈՒԹՅՈՒՆ

ՄԻԶԱՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ԾՐԱԳՐԵՐ

1. ԳՐԱԿԱՆ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆ

V—VII ԴԱՍԱՐԱՆՆԵՐ

2. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

VIII—X ԴԱՍԱՐԱՆՆԵՐ

8(07)
5-73

ԽՈՀ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆ

ՅԱՐԵՎԱՆ

1938

19 MAY 2005
172 OCT 2003

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՈՀ ԼՈՒԺԱԴԿԱՄԱՏԱՏ

8(07)

Մ-73

Կ

ՄԻԶՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ԾՐԱԳՐԵՐ

1. ԳՐԱԿԱՆ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆ

V—VII ԴԱՍԱՐԱՆՆԵՐ

2. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

VIII—X ԴԱՍԱՐԱՆՆԵՐ

ԼՈՒԺՐԱՏ

ԵՐԵՎԱՆ

1938 թ.

01.07.2013

627

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒՆ ՅԵՎ ԳՐԱԿԱՆ ԸՆԹԵՐՅԱՆՈՒԹՅՈՒՆԸ
5—7 ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ

Դպրոցում մայրենի լեզվի դասավանդման ընդհանուր խընդիրը վորոշված են Համ. Կ. (Բ) Կ. Կենտկոմի 1932 թ. ոգոստոսի 25-ի վորոշման մեջ. «Մայրենի լեզվի ծրագիրը պետք ե ապահովի իրոք սիստեմատիկ և ճշգրիտ շրջադաշտած գիտելիքների յուրացումը, ինչպես և ճիշտ կարգալու, զրելու և խոսելու կայուն ունակություններ, աշակերտների ուսման աշխատանքի պրակտիկայում մտցնելով ինքնուրույն գրավոր աշխատանքներ, քերականական վերլուծություն և այլն, ինչպես դասարանում, այնպես ել տանը»:

Համաձայն այդ խնդիրների, հայոց լեզվի և գրական ընթերցանության դասընթացքը բաժանվում է յերեք հիմնական մասերի. 1-ին մաս՝ քերականություն ուղղագրության և կետագրության հետ, 2-րդ մաս՝ բանավոր և գրավոր խոնքի գարգացումը, 3-րդ՝ գրական ընթերցանությունը:

Մինչև այժմ դպրոցում հայոց լեզվի դասավանդման խընդիրը լուծվում եր անբավարար չափով: Այդ յերեսութիւն հիմնական պատճառներից մեկը յեղել և այն, վոր քերականության, խոնքի կուլառուրայի և գրական ընթերցման մեջ յեղել և արհեստական վնասակար ճեղքվածքը: Այդ ճեղքվածքը բացասաբար և անդրադառնում բոլոր բաժինների վրա, քերականությանը արված պարապմունքներից գուրս և մնացել կենդանի լեզվի նյութը, խոնքի կուլառուրայի զծով տարվող աշխատանքը կտրված և նրա կառուցվածքի և ձեւի ուսուցումից, գեղարվեստական ստեղծագործությունների ուսումնամասիրումը հաճախ վերածվել և սիեմատիկ դասողությունների:

Մինչդեռ այդ բաժինները, վորոնցից յուրաքանչյուրն իր առանձնահատուկ խնդիրներն ունեն, այնու և արգանական կտավի մեջ լինեն միմյանց հետ և ծառայեն միասնական նպատակին. այն և աշակերտառությանը տան քերականության մեջ շարադրված հա-

Պատ. Խմբ. Աս. Առաջայան
Տեխ. Խմբագիր Զ. Մարտիրոյան
Սրբագրիչ Մ. Հայնադարյան

Գլավմիտի մազոր՝ 6677, Պատմեր № 516, Տիբաժ 4000

Պետհամալսարանի հրատարակչության տպարան, Յերևան



6508
38

յոց լեզվի որենքների և յերևուշթների մասին գիտելիքների սիստեմատիկ մի ամբողջություն, պատվաստել գիտակցական ընթերցանության, գրագետ գրելու և ճիշտ խոսելու ամուր ունակություններ: Սրա արդյունքը լինելու յե այն, վոր աշակերտությունը պետք ե պարզ պատկերացում ունենա հայոց լեզվի նշանակության մասին, նրա կառուցվածքի և քերականական ձևերի, նրա բառապաշարի հարստության մասին, նրա պատմության մի քանի կարեռ մոմենտների մասին: Աշակերտները պետք ե կարողանան հաշիվ տալ կարգացած ամբողջ ստեղծագործության և նրա առանձին հատվածների բոլվանդակության մասին, հասկանալ նրա իդեալական նշանակությունը, քերականական և տրամաբանական տեսակետից ճիշտ կառուցել սիփական բանավոր և գրավոր խոսքը:

Համաձայն ուսումնական պլանի, քերականության սիստեմատիկ դասընթացը վերջանում է 7-րդ դասարանում: Նկատի ունենալով հայոց լեզվի ծրագրին ավարտելու անհրաժեշտությունը՝ 8, 9 և 10-րդ դասարաններում ևս հայոց լեզվին արվում ե շաբաթական մեկական ժամ: Միջնակարգ դուրսցն ավարտողը միանգամայն գրագետ պետք ե լինի մայրենի լեզվից, պետք ե անսխալ և ճիշտ կառուցի սեփական բանավոր և գրավոր խոսքը:

8—10 դասարաններում կրկնվում ե հայոց լեզվի այն դասընթացը, վոր անցել են վոչ լրիվ միջնակարգ դպրոցում, տարվում ե աշխատանք ուղղագրական ունակությունների հետազա ամրապնդման գծով: այդ պարապմունքները տարվում են գլուխութափես հիշյալ դասարանների աշակերտության զանազան տեսակի գրավոր աշխատանքների կապակցությամբ (շարադրություններ, կոնսպեկտներ, թեզիսներ և այլն) և անհրաժեշտ դեպքում քերականական վերլուծության, ուղղագրության և կետադրության առանձին դասերի կապակցությամբ:

Ինչ վերաբերվում ե լեզվագիտության տարրերին, ապա նրանք մասնակիորեն տրված են Սրարատ Ղարիբյանի և Գ. Սեպակի 5—7 դասարանների քերականության դասադրքերում, և մասնակի կերպով աշակերտությունն անցնում է պատմագրական դասընթացքի կապակցությամբ (հատվածներ Խ. Աբովյանի յերկերից, Մ. Նալբանդյանից, Դ. Աղայանից, Հ. Թումանյանից, Պոռշյանից և այլն):

Հայոց լեզվի՝ վերեկում հիշատակված աշխատանքի տեսակների ներքին սերտ կապը բացառում ե տարրեր բաժինների

մեջ ժամերի՝ մեխանիկական բաշխման ամեն մի հնարավորություն, ուստի ամեն մի դասատու պարտագոր և ավելի ուշագրությամբ և խստությամբ մոտենալ ծրագրային նյութի պլանավորմանը: Նրա տրամադրության տակ կա հայոց լեզվի և գրական ընթերցանության համար հետեւյալ քանակի ժամերը:

Քաղաքի գլուխում

վեցորյակում

5—բգ դասարան—6 ժամ

6—բգ » 5 »

7—բգ » 4 (3) ժամ

գյուղի գպրոցում

յոթնորյակում

7-ժամ

6 »

4 (3) ժամ

Յենելով ժամերի այդ քանակից դասատուն պլանավորումն ծրագրային նյութը՝ քերականության, գրական ընթերցանության և լեզվի կուլտուրայի համար առանձին-առանձին:

Այդ գեղագում կարելի յե յենել մոտավորապես հետեւյալ հաշվից: հինգերորդ դասարանում հայոց լեզվի և գրականության ընթերցման համար նախատեսնված ժամանակի կեսը՝ այսինքն վոչ պակաս շաբաթական յերեք ժամ, պետք ե հատկացնել քերականությանը և ուղղագրությանը և նույնքան ժամանակ ել գրականության ընթերցմանը և վարժություններին, վորոնք կապված են բանագոր և գրավոր խոսքի հետ: Նույնպիսի հարաբերություն այդ բաժինների համար մոտավորապես հարկավոր ե նկատի ունենալ 6—7 դասարանների համար: Մասնավորապես գրական ընթերցանության համար հարկավոր ե միջին հաշվով առանձնացնել յուրաքանչյուր դասարանում, վեցորյակում յերկու ժամից վոչ պակաս:

ԳՐԱԿԱՆ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆ

5—7 ԴԱՍԱՐԱՆՆԵՐ

ԲԱՑԱՏՐԱԿԱՆ

Նպատակ ունենալով լիկվիդացիայի յնթարկել 5—7 դասարանների հայոց լեզվի և գրականության դասավանդման միջև գույնություն ունեցած ճեղքվածքը, ներկա ուսումնական տարրվանից, այդ դասարանների ուսումնական պլանում սահմանվում և ժամանակի ընդհանուր քանակ այդ առարկաների համար. հենց առարկայի անվանումը տրվում է անխղելի կապի մեջ՝ հայոց լեզվու և գրական ընթերցանություն։ «Գրական ընթերցանություն» տերմինը մեր դպրոցների 5—7 դասարաններում գրականության պարագմունքների նկատմամբ սկսվել է գործածվել վոչ վաղուց։

Սակայն ուսուցչության մեջ արագորեն մասսայականացավ, վորովհետև վաղուց արդեն հասունացել եւ անհրաժեշտություն հենց առարկայի անվանման մեջ նշելու այն տարրերությունը, վոր գոյություն ունի բարձր դասարաններում (8—10) և ցածր դասարաններում գրականության դասավանդման ընույթի մեջ։ Արդեն ինքը, դասընթացի՝ գրական ընթերցանություն անվանումը պետք եւ ուսուցչի աշխատանքն ուղղի դեպի դեռահաս աշակերտի, իբրև զգայուն և գիտակից ընթերցողի դաստիարակության նպատակը, նրա շրջահայեցողության լայնացումը և նրա կողմից հայոց լեզվի գեղեցկության և հարստությանը տիրապետելուն։

5—7 դասարանների աշակերտությունը աշխատանք և տառում ամենից առաջ առանձին ստեղծագործությունների վրա արտահայտիչ ընթերցում, բովանդակության վերլուծում, ամբողջ և առանձին հատվածների բովանդակության վերապատճում, հասկացողություն գործողության ժամանակի և տեղի մասին, վերլուծել և գնահատել ներոսի վարքադիմը, նրա ընութագիրը, վերապատճուր հերոսի հարստագությունը մյուս անձերի հետ, անհրագիտակությունը հերոսի հարաբերությունը մյուս անձերի հետ։

Ժեշտ ցիտատների ընտրություն, — ահա մոտավորապես հարցերի այն շարքը վորը կապված է գրական ընթերցանության հետ։

Վոչ լրիվ միջնակարգ դպրոցների ուսուցիչների լավագույն պրակտիկան վկայում է այն մասին, վոր նրանց աշխատանքի լավ արդյունքներն արտահայտվում են աշակերտների լրիվ գրագետ լինելու մեջ, վոր աշակերտներն առանց վերապահության անթերի տիրապետում են հայոց լեզվին, կարողանում են խելացիորեն և գիտակցորեն հասկանալ իրենց կարգացած գեղարվեստական ստեղծագործությունները և հիշողությամբ կատարել մեջբերումները այդ ստեղծագործությունների լավագույն տեղերից։ Ահա այդ արդյունքներն ուղղակի հետովանք են ուսուցչի աշխատանքում լեզվի այդ տերմինի ներ հասկացողությամբ, և գրականության դասավանդման միջև հաստատված սերտ կապի։

Այդ կապի անխղելիության մասին խոսում են նաև լավագույն դասագրքերի և ընթերցանության գրքերի անունները, վորոնք պատկանում են մինչ հեղափոխական անցյալի առաջավոր մանկավարժներին (ոռուսական՝ „Ռուսաց բառեր“, „Շիշուաց բառեր“)։

Գրականության դասավանդման մեջ վուլգար սոցիոլոգների սիրած «մեթոդը» հանդիսացող ամենավնասակար սխեմատիզմը, վոր արտահայտված է կուսաքանությունների ստեղծած գասագրքերում՝ կենսունակությունից զրկել եր և յերեխանների համար անհետաքրքիր գարձրել խոսքի արվեստագետների գեղեցիկ ստեղծագործությունները։ Չոր և վերացական դասավանդումը քերականության դասերին մի կողմից և սխեմատիկ դատողությունները գրողի «ստեղծագործության» մասին ընդհանուր առմամբ, փաթաթելով յերեխաններին, վորոնք գեռնա ինչպես հարկն և չգիտեն գրողի աշխատությունները, հայոց լեզվի և գրականության դասավանդման խնդիրները հավասարեցնում եյին գերուցի և հասցնում այն տիսուր արդյունքներին, վորոնց գետ մինչև այժմ ել պայքարում է մեր գալրոցը։

Թերագնահատելով գեղարվեստական գրականության նշանակությունը, վորպիս յերեխանների դաստիարակության հզոր միջոցի, նրանց մեջ կոմունիզմի համար պայքարելու լավագույն ձգտումների զարգացման միջոցի, ուսուցիչները հաճախ անտեսել են յերկի բովանդակությունը, աշակերտների ամբողջ ուշագրությունը փոխագրելով յերկրորդական հարցերի վրա. ինչպես որի-

նակ՝ տվյալ յերկի գերն ու տեղը հեղինակի ստեղծագործության մեջ, նրա ազդեցությունը ժամանակակիցների վրա և այլն: Այդ և նման հարցերը պակաս կարեռ չեն, բայց այդպիսի հարցեր դպրոցի միջն դասարաններում դնելը վաղաժամ ե, քանի փոր այդ դասարաններն ունեն իրենց անհետաձգելի և պարապելու ինդիքները:

Վորպեսպի ուսուցիչը գրական ընթերցանության աշխատանքներին ճիշտ ուղղություն տա, նա պետք ե պարզ պատկերացնի միջնակարգ դպրոցում առանձին դասարանների գրականության դասավանդման հեռանկարներն ու խնդիրները:

Միջնակարգ դպրոցում գրականության դասավանդումն ունի հետեւյալ ընդհանուր խնդիրները:

1. Անցյալի կյասիկ գրական-գեղարվեստական սեղծագործությունների և ծամանակակից գրականության լավագույն յերկերի բովանդակության յուրացումը:

2. Զեռք բերել գիտելիքներ գրականության տեսությունից, վորն անհրաժեշտ ե գրական ստեղծագործությունների հիմնական ձևերի պարզաբանման և աշտկերտության խոսքի զարգացման համար:

3. Ուսումնասիրել գրականության պատմության հիմունքները, վորպես գիտության, վորը բացահայտում ե գրական-գեղարվեստական սեղծագործության զարգացման պրօցեսը:

Միանգամայն ակներել ե, վոր մատնանշած յերեք խնդիրները չեյին կարող միաժամանակ դրվել աշակերտության առաջ: 5—7 դասարանների աշակերտության առաջ դրվում ե նրանցից առաջինը, վորպես հիմնական խնդիր. այսինքն՝ առանձին գրական ստեղծագործությունների գիտակցական ընթերցում և բովանդակության յուրացումը: Հանդիսանալով պատանիների մտավոր և բարոյական զարգացման անսպառ աղբյուր, հայ և խորհրդային մյուս ժողովրդների գրականություններն իրենց լավագույն նըմուշներով նպաստում են կոմունիզմի համար մարտիկներ պատրաստելու գործին, սովորողների մեջ արթնացնում են հետաքրքրություն, ստեղծագործական յերեվակայություն, գեղարվեստական ճաշակ, նույնպես և նպաստում են լեզվի զարգացմանը, աշակերտության կազմակցված և բովանդակալից խոսքին: Հենց այդպիսի նպատակ ե դնալ իր տառաջ գրականության ընթերցման դասընթացը 5—7 դասարաններում: Դասատույի զեկավարությամբ կարդալով ընտիր ստեղծագործություն, աշակերտները պետք ե վորքան հնարավոր և յուրացնեն այդ ստեղծագործության գե-

ղարվեստական պատկերները, խորանան ստեղծագործության իդեալական բովանդակության մեջ, նրանով գաստիարակեն իրենց զգացմունքները և սովորեն հասկանալ ու սիրել մայրենի լեզվի ուժը, գեղեցկությունը և բանաստեղծական ձևերը, վորոնցով գեղագետովորդը:

Վերջին խնդիրն անհրաժեշտ ե զարձնում աշակերտությանը տարրական գիտելիքներ տալու նաև գրականության տեսությունից: 5—7 դասարանների աշակերտությունն այդ գիտելիքները ձևոք ե բերում կարգացած յերկի վերլուծմանը զուգընթաց, գործնականորեն, կոնկրետ որինակների հիման վրա:

Վերեվում հիշատակված բոլոր խնդիրները լինելով հիմնականը 5—7 դասարաններում, ամբողջապես չեն սպառվում վոչ լրիվ միջնակարգ դպրոցում. որինակ յերկի բովանդակության ուղագիր վերլուծությունը շարունակվում ե նաև բարձր դասարաններում:

Զարգացնելով այդ ունակությունները, 5—7 դասարանների գրական ընթերցանության դասընթացը միաժամանակ աշակերտությանը տալիս ե անհրաժեշտ պատրաստություն՝ յուրացնելու 8—10 դասարանների՝ բովանդակությամբ բարդ և ըստ նյութի ծավալի լայն պատմագրական դասընթացը:

Մինչև այս պահանջների համաձայն նոր քրեստոմատիանների լույս ընծայումը, վորոնք գրական ընթերցանության համար աշակերտությանը պետք ե տան ավելի բազմազան և լայն նյութ, ոգտագործում են գոյություն ունեցող քրեստոմատիանները 5—6 և 7—8 դասարանների համար: Սակայն 5—7 դասարանների ծրագրում, զրոյնների ստեղծագործությունների պատմա-ժամանակական հաջորդականությամբ յեղած դասավորությունը, չպետք ե դասատույին մղի հարցերի ընդհանուր դրմանը՝ գրողի ստեղծագործության մասին ամբողջությամբ առած, ստեղծագործության եվլոյուցիայի, եպօխայի աղղեցության մասին և այլն. Հարցեր, վորոնք պատանի աշակերտության ուժից վեր ընդհանրացումներ են:

5—7 դասարանների աշակերտության համար անմատչելի պատմագրական տեսակետից չմեկնաբանելով ստեղծագործությունը, ուսուցիչը միաժամանակ չպետք ե հրաժարվի ստեղծագործության բովանդակությունը պատմականորեն լուսաբանելուց, վորովնեաև ստեղծագործությունների բովանդակությանը ըմբռնումն անհնարին և քաղաքացիական պատմությունից ան-

յատ վերցրած: Այսպես որինակ. 5-րդ դասարանում Հակոբ Հառիկորյանի «ՄԵԼ և մեկ ևլ» բանաստեղծությունը, Դ. Աղայանի «Յերկու քույր»-ից հատվածները, Պուշկինի «Աքսորիալ գեկաբրիստներին» բանաստեղծությունը, Վիկտոր Հյուգոյի «93»-ից հատվածները կամ 6-րդ դասարանում՝ Ստ. Զորյանի «Դրադարանի աղջիկը» և Իլյա Շավիտաձելի «1871 թ. 23-ին մայիսի» բանաստեղծությունը և կամ 7-րդ դասարանում՝ «Պեպոն», «Հրդեհ նավթագործարանում» պատմվածքը, Մ. Գորկու «Մայրը» անցնելիս, ուսուցիչը պետք է տա անհրաժեշտ պատճական տեղեկություններ, բացատրություններ, վորոնք սերտորեն կապված են այդ ստեղծագործությունների պատկերների հետ: Սակայն կարիք չկա դմել հարցեր Պուշկինի աշխարհայացքի եկույուցիայի մասին կամ որինակ. «Յերկու քույր» վեպի տեղը Աղայանի ստեղծագործության զարգացման մեջ, հարցեր, վորոնք պատկերելու հն հեղինակի ստեղծագործական ուղին, բայց անմիջականորեն չեն բացահայտում տվյալ ստեղծագործության բովանդակությունը:

Խոսքի զարգացման խնդիր պարունակող գրական ընթերցանության պարագմունքները տարվում են սերտորեն կապված հայոց լեզվի հետ: Մի շաբաթ գեպքերում լեզվի և գրականության զաների մեջ գոյություն ունեցող սահմանը կարող է վերանալ, վորոնք միանդաման որինական և այդ դասարանների համար, վորոտեղ գրականության ընթերցման նյութը կարող է դիտվել նաև վորպես խոսքի այս, կամ այն ձեփ գործածության նմուշ: Այսպես որինակ. 5-րդ դասարանում Հ. Թումանյանի «Հառաջանք» պոեմից բերված հատվածները լեզվական-քերականական վարժությունների ամենալայն հնարավորություններ են տալիս: Գրական ընթերցանության հետ կամաված շարադրության և ինքնուրույն գրավոր գործնական աշխատանքները, նրանց քննարկումն աշակերտության հետ միասին՝ ձեփ և բովանդակության կողմից, այդ բոլորը նույնպես լեզվի ուսուցման աշխատանքները կապում են գրականության հետ:

Ամեն կերպ ոգտագործելով լեզվի և գրականության կապը 5—7 դասարանների աշակերտության աշխատանքներում, ուսուցիչը պարտավոր է առանձնահատուկ ուշադրություն դարձնել աշակերտների բառապաշարի հարստացման վրա, մշակել նրանց անթերի կարգալու տեխնիկան և մեծ քանակությամբ գրական նմուշների միջոցով սովորեցնել արտահայտիչ կարգալ: Քանի վոր

բառապաշարի հարստացման և նրա գարգացման լավագույն միջոցներից մեկը հանդիսանում է պոեզիայի և գեղարվեստական արձակի կատարյալ նմուշներից բերանացի սովորելը, ուսուցչին իրավունք է վերապահվում լայնորեն ոգտագործել ծրագրում յեղած ստեղծագործությունները՝ հանձնարարելով աշակերտներին բերանացի անելու: Խոսքի գեղարվեստական ստեղծագործությունները՝ Դրա համար ել դիակարպիտիվները, իլլուստրացիաները, ինչպես և կինոնկարները պետք է լայնորեն գործածության մեջ գրվեն գրական ընթերցանության դասերին:

Հայ և ուռւ նշանագոր նկարիչների նկարների արտատպությունները պետք ե աշակերտության համար ծառայեն վորպես լավագույն նյութ՝ զարգացնելու նրանց կապահցված և պատկերավոր խոսքը՝ գրավոր թե բանավոր արտահայտությամբ: Մայրենի լեզվի գասատուն միայն այս ուղիներով կմոտենա իր պարտականությանը, այն եւ ամեն մի աշակերտից գաստիւրակել խորհրդագյին քաղաքացի, վորը հիմնալի գիտի, հասկանում է իր ժողովրդի լեզուն, գրականությունը և պատմությունը:

Խոսքի զարգացման աշխատանքի բազմազան ու բազմաթիվ տեսակները, վոչ լրիվ միջնակարգ գպրոցներում աշակերտության կողմից կատարված աշխատանքները 5-րդ դասարանում պետք ե վորոշ հանրագումարի բերվեն: Միջնակարգ գպրոցների բարձր գասարաններում այդ աշխատանքները պետք է շարունակվեն, բայց այլ նյութի վրա և այլ ձեռու:

ԲԱՆԱԿՈՐ ԵԵՎ ԳՐԱՎՈՐ ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

5—7 դասարանների աշակերտության գրավոր և բանավոր խոսքի զարգացումը տարվում է սերտ կապված մի կողմից քերականության հետ, մյուս կողմից գրական ընթերցանության հետ:

5—6—7 դասարաններում բանավոր և գրավոր խոսքի զարգացման համար աշխատանքի հիմնական տեսակները հետևյալներն են՝ ա) բառարանային աշխատանք, բ) պլաններ կազմելը (պարզ և բարդ), գ) հարցերին ծավալուն պատասխան տալը, դ) կատարել մեջբերումներ, յե) տարբեր տեսակի շաբաթություն-

Ներ, զ) վոչ բարդ բնութագրություններ, ե) շարադրություններ և ինքնուրուցն աշխատանք տվյալ նկարի բովանդակության մասին, ը) վոչ մեծ ստեղծագործական շարադրություն՝ կարդացած յերկի և անձնական դիտողությունների ու ապրումների մասին:

Այդ աշխատանքները բաշխվում են հետեւյալ ձևով, ըստ դասարանների:

5-ՐԴ Դ Ա Ս Ա Ր Ա Ն

1. Նոր բառերի բառարան կազմելը: Աշխատանքներ բառերի արմատների վրա. նրանց ոգտագործումը կապակցված և բովանդակալվեց խոսքի մեջ:

2. Կազմել հարցերի ծավալուն պատասխաններ:

3. Տեքստը գրել բերանացի:

4. Կատարել մեջբերումներ:

5. Կազմել պատմելու պարզ պլան. ա) հարցերի ձևով, բ) հիշեցնող նախադասությունների ձևով, դ) պարզ նախադասությունների ձևով, դ) խառը ձևով:

6. Բանավոր պատմել և գրավոր շարադրել կարդացած բնակրին մոտ կամ պատմողական բնույթի հատվածների բովանդակությունը (համաձայն տվյալ և ինքնուրուցն կազմած պլանի):

7. Շարադրություններ վառ գինամիկական սյուժե ունեցող նկարի բովանդակության մասին:

8. Ստեղծագործական գրավոր աշխատանք, մեծ մասամբ պատմողական բնույթի:

6-ՐԴ Դ Ա Ս Ա Ր Ա Ն

1. Բառարանային և բառարմատների աշխատանքների շաբանակումը:

2. Նկարագրելու և պատմելու համար բարդ ոլլաններ կազմելը:

3. Բանավոր պատմել և գրավոր շարադրել (համառոտ) կարդացած պատմողական տեքստի բովանդակությունը՝ ծավալով ավելի մեծ քան 5-րդ դասարանում՝ տրված կամ ինքնուրուցն էլազմած պլանի համաձայն:

4. Շարադրել բնագիրը նկարագրական բովանդակությամբ (բնույթյուն, շրջապատող իրադրություն, պորտրետ):

5. Պատմվածք՝ համաձայն նկարի (պեյզաժ):

6. Նկարագրական և պատմողական բնույթի ստեղծագործական շաբանակություն:

7. Պարզ բնութագրեր (մեծ մասամբ բանավոր ձևով):

7-ՐԴ Դ Ա Ս Ա Ր Ա Ն

1. Բառարանների ոգտագործումը (ենցիկլոպեդիա, ոտար լեզուների բառարան):

2. Տվյալ թեմայի վերաբերյալ մի քանի պատմվածքներից ցիտատների ընտրություն:

3. Տվյալ ստեղծագործության մեջ յեղած բնութագրերի շարադրում:

4. Բնութագրերի կազմում՝ համաձայն դասարանում մշակված պլանի: Բնութագրման համար նախորոք ընտրած ցիտատների ոգտագործում:

5. Շարադրություն յերկու նկարի մասին (համեմատելու նկատառումով):

6. Նկարագրական և պատմողական տիպի շարագրություն քննադատական տարրերով:

Ծանօթարյալն. 1. Գրավոր աշխատանքների ծրագրը նկատի ունի նրանց տեսակների աստիճանական զարգացումը: Պետք է նկատի ունենալ վոր յուրացված աշխատանքների տեսակները կրկնելու յեն հետագա դասարաններում ունակություններն ամրացնելու նպատակով:

2. Ամեն մի նոր տեսակի գրավոր աշխատանքին պետք է նախորդի բանավոր աշխատանքը:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կարդացվող ստեղծագործության հետ կապակցված՝ աշակերտությունը յուրացնում է գրականության տեսության մասին հետեւյալ տեղեկություններն ըստ դասարանների:

5-ՐԴ Դ Ա Ս Ա Ր Ա Ն

Ուղիղ և պատկերավոր խոսք:

Մինոնիմներ (համանուններ), անոնիմներ (նույնանուններ) համեմատություն, եպիտետ (մակդիր): Առակ: Հեքիաթ: Համելուկ: Առած: Ասացվածք:

Մետաֆորա: Մինեկդոխա: Հիպերբոլա: Տավտոլոգիա (կրկնություններ):

Պատմողականություն: Նկարագրություն: Դիալոգ (յերկանիություն): Հասկացողություն պատմվածքի ու վեպի մասին:

Պեյզաժ: Պորտրետ:

Արձակ և վոտանավոր խոսք:

Ռիթմ և հանգ (ռիֆմ): Վոտանավորի չափերը (յերկու և յերեք մասերից կամ յերկամանակ և յեռամանակ): Հասկացողություն բանաստեղծական վոտքի և տան մասին: Տարրական գաղափար լիրիկական բանաստեղծության, պոեմի և լիդենդի մասին:

Գաղափար գեղարվեստական յերկի թեմայի սյուժեյի և կոմպոզիցիայի (կառուցվածքի) մասին: Տարրական հասկացողություն գեղարվեստական ստեղծագործության հիմնական ժանրերի (եպոս, լիրիկա, դրամա) մասին:

Տարրական գաղափար գրամատիկական յերկների (կոմեդիայի) մասին. հանգույց, կուլմինացիա, հանգույցի լուծում: Թործողություն, տեսարան, գործող անձ, դիմուգ, մոնուգ, ոեպլիկա, ոեմարկա (հեղինակի նշումը կամ դիտողությունը դրամատիկական յերկում): Հասկացողություն կոմիզմի մասին (արտաքին և ներքին): Սատիրա, յումոր, իրոնիա, սարկազմ: Լիրիկական ստեղծագործության տեսակներ՝ ներբող, ելեգիա, քառյակներ: Ալեգորիա: Անտիթեզ: Խնկերսիա (բառերի վոչ սովորական հաջորդականությունը՝ գլխավորապես վոտանավորի մեջ): Ռիթմիկ արձակ: Արձակ բանաստեղծություն: Ֆոլկոր, աշուղական ստեղծագործություն: Գրականության կապը Փոլիորի հետ: Ֆոլիորի մշակումը և ոգտագործումը գրողների կողմից (Խ. Աբովյան, Աղայան, Թումանյան, Իսահակյան և այլն):

Խորհրդային փոլիորը և խորհրդային աշուղական ստեղծագործությունը:

Սիստեմատիկ կերպով կրկնել գրականության տեսությունից 5 և 6 դասարաններում անցած դիտելիքները՝ համապատասխան գեղարվեստական յերկերի ուսումնասիրության կապակցությամբ:

ԳՐԱԿԱՆ ԸՆԹԵՐՅԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Ներկա ծրագրում գրական ընթերցանության համար առաջարկվող գեղարվեստական յերկերի ցանկն զգալի փոփոխության և յենթարկվել 1937/38 ուսումնական տարվա ծրագրի համեմատությամբ: Այդ փոփոխության համաձայն կազմվել են գրականության նոր քրեատոմատիկաները:

Ընթերցանության նյութերի ցանկում նշվում են նաև թերոր գրողների կենսագրություններն են ուսումնասիրվելու տվյալ դասարանում:

1. Հակոբ Հակոբյան.— Աշխատանքի յերգը, Մեկ ել, մեկ ել Մայիսեկյան յերգ, Լուսաբացին, Աշխատանքի ելեգիաներից, Ստեփան Շահումյանին, Բագու, Չորագեսում:

2. Արագիլ.— Մեկ կարետը, Խորհրդային առավոտը, Լույսերը:

3. Սևիկան Զարյան. — «Մի կյանքի պատմություն» (համաձաներ) ա. Մեր տունը, բ. Վրեժինդրություն, գ. Ահավոր գեշեր և անծանոթ տեղեր:

4. Նաիրի Զարյան.— Սաքո Միկինյան, Բուքը, մարդը, մեքենան:

5. Ղազարաս Աղայան. — Սերմնացան, Ճախարակ, Հատվածներ «Յերկու քույր» վեպից՝ ա. Արգումանի և ճաղարանց տղերքի կոփքը, բ. Արգումանի մայրը, գ. Վարդանն ու ճաղարանց թաթոսը:

6. Համիտենսս Թաւմանյան. — Հին որհնություն, Գութանի յերգը, Թագավորն ու չարչին, Վոսկե քաղաքը, Քաջ Նաղարը:

7. Արաբեկ Խնկյան. — Բարեսիրտ աղվեսը, Փայտահատն ու մահը, Գայլն ու կատուն, Ժանահաստ, Գայլն ու գառը:

8. Ալ. Պուտկին. — Կովկաս, Հուշաբձան, Կալանավորը, Զատպայելին, Աքսորյալ գեկաբբիստաներին, Հեքիաթ վոսկի աքլորիկի մասին, Բուքը (հատված «Կապիտանի աղջիկը» վեպից):

9. Մաքիմ Գորկի. — Հատվածներ «Ծառայության մեջ» ինքնակենսագրական վեպից՝ Կոշկեղենի մագաղինում, Վոլգայի վրա «Դոբրի» շոգենավում, Գրքերից վախեցողների շրջանում:

10. Սուլեյման Ստալսկի. — Մտորումներ հայրենիքի մասին, Լեռների յերկրի աղջիկներին, Վորդուս:

11. Ն. Ռուսավակի. — Պավել Կորչագինի քաջագործությունները (հատված «Խնչպես եր կոփվում պողպատը» վեպից), հատվածներ «Փոթորկածիններ» վեպից, ա. Փոքրիկ Մոյշեն և իր մորաքույր Ստուան, բ. Այն մասին, թե ինչպես Կասիլյոկը փրկեց Անդրեյին, գ. Գնդապետ Մոգինիցկու նամակը և նրա պատասխանը, դ. «Պիտի կովենք մինչև վերջին շունչը»:

12. Վ. կիսար Հյուգո. — Բարիկադներում, Բարիկադների վրա, Սոլքեյան անտառը (հատված «93»-ից):

Դրականության քընսառումատիայում տրված նյութերի ծավալով 5-րդ դասարանում անցնել հետեւյալ գրողների կենսագրությունները.

Մաքսիմ Գորկի, Հակոբ Հակոբյան, Արագի, Դ. Աղայան Հ. Թումանյան և Ալ. Պուշկին:

6-ՐԴ Դ Ա Ս Ա Ր Ա Ն

1. Խաչտուր Աբավյան. — Ես գրքի ճամբի խրատը, Հայտակեր Փեշը, «Վերք Հայաստանի»-ից՝ ա. Զմեռ, բ. Զանդի:

2. Պերճ Պուսեյան. — «Հացի ինսդիր» վեպից հատվածներ՝ ա. Միկիտան Սաքոն, բ. Յասավուլ, «Հունոն» վեպից հատվածներ՝ ա. Վեճ Հունոյի մասին քաղաքի հրապարակում: բ. Անծանոթուղեկից՝ Նազո անունով, գ. Յես են մարդու քեռու տղեն եմ, դ. Քարափին թիկնած մարդը, վորը մենախոսում եր, յե. Նագոյի մենախոսությունը:

3. Դագարոս Աղայան. — Տորք Անդեղ, Քյորողի (հատվածներ):

4. Մաւրացան. — «Առաքյալը» (հատվածներ)՝ ա. Դիլջան, բ. Զիրուիլուն, գ. Տիրացու Մոսինի դպրոցը:

5. Վրտնես Փափազյան. — Արտը, Հողի աշխատավորը:

6. Հօվի. Հօվիանիսիայան. — Ահա քեզ ձեռս, Աշուղ, Մնաք բարով, Սարն ի վեր, Արագյաղ բարձր սարին, Ժայռը, Հատիկ:

7. Ալեքսանդր Ծառարյան. — Դիր, Թուիր, այ իմ յերգ, Զմեռային գիշեր, «Դրչի հանաքներ»-ից՝ ա. Փրկության ուղի, բ. Հայ հեղինակի կտակը, Նոր սերունդ, Մերմացան, Բանվորուհու որորը:

8. Հօվի. Թումանյան. — Իմ հայրենիքը տեսչու ես, ասա, Սա-

սոնցի Դավիթ, Հառաչանք, Անիծած հարսը, Նվեր Վրաստանի բանաստեղծներին:

9. Հակոբ Հակոբյան. — Ամբոխն իմ աշխատը, Յես այն եմ սիրում, Մեռան չկորան, Զմեռային պալատ, Վոլխովստրոյ:

10. Շուշանիկ Կուրդինյան. — Բանվորները, Հանդցըրեք ջահերը, Դութանի յերգը:

11. Արագի. — Բարելոնի աշտարակը, Հաղար գլխանի:

12. Աս. Զորյան. — Դրագարանի աղջիկը (կրծատ):

13. Սիրառ. — Ջրանցքը կիսուի:

14. Ն. Ա. Նեկրասով. — Հայրենիք, Ելեգիա, Աղքատ ծերուկի յերգը, Զննձվոծ արտը, Նոր տարի, Մայրը:

15. Տարաս Շելչենկո. — Կտակ, Որոր, Ինչու յեմ յես տկար:

16. Խյա Ճավինավաճե. — Պոետ, Թեկուզ և մեռնեմ, Ավ գեղեցիկի իմ աշխարհ, Գարուն, Ելեգիա, 1871 թ. 23-ն մայիսի, Նիկոլով Գաստաշարբշվիլի:

17. Սաբիր. — Բեյնելմիլել, Հողի մշակը, Ծեր պարտիզանը, Մոլլայի գարդը, Եր, ամի, Հարուստը Բաղվի ֆահաններին:

18. Դմ. Ֆուրմանիվ. — Հատվածներ «Զապայնվ» վեպից:

19. Ռումն Ռուլան. — Ժան Քրիստոֆի մանկությունը:

«Գրականության քրեստոմատիա»-յում տրված նյութի ծավալով 6-րդ դասարանում անցնել հետեւյալ զբողների կենսագրությունները. Խ. Արովյան, Պ. Պողյան, Հ. Թումանյան, Հ Հակոբյան, Արագի, Նեկրասով, Տ. Շելչենկո, Դմ. Ֆուրմանով:

6-ՐԾ Դ Ա Ս Ա Ր Ա Ն

7-ՐԾ Դ Ա Ս Ա Ր Ա Ն

1. Մ. Նալբանդյան. — Յերգ աղատության, Հովնաթանյանց (հատված «Մեռելահարցուկ» վեպից):

2. Հակոբ Պարսիան. — Մեծապատիվ մուրացկաններ (հատվածներ), Կամիթներ (հատվածներ), Հարուստ ըլալու միջոցները:

3. Գարցիկ Սունելուկյան. — Պեպո (կրծատ):

4. Շիրվանգալե. — Հրդեհ նավթագործարանում:

5. Հավիանիս Թամանիյան. — Անուշ, Քառյակներ, Արեգը սկ աշխարքում (հատված «Հազարան բլրուկից»):

6. Նար-դոս. — Նեղ որերից մեկը, Հոգուն վրա հասավ:

7. Ավետիք Խամիսկյան. — Ալագյազի մանիներից, Նորից յեկան գարնան անուշ որերը, Անհուն վրեժի և ատելության, Ալի, մեր սիրաը, Աղատության դանդ, Սասմա Մեր (հատված):



8. Վահան Տերյան.— Արևածագ, Վերապարձ, Ստեփան Շահումյանին, Շշուկ ու շրջուն, Լուսաբացին նա բարձրացավ կախաղան, Քեզ եմ յերգում, Հարյավ հավետ, Յեկավ յերկաթ քայլով, Յել, դեմոկրատիա, Զարկեցեք անդուլ, Մեր թշնամին բերում և տանկեր, Արեգակը հուր:

9. Գերենիկ Դեմիրյան.— Խաչիդ (հատվածներ):

10. Նալիրի Զարյան.— Ստալին, Ռուշանի քարափը (հատվածներ):

11. Գեղամ Սարյան.— Բալլադ՝ Խորհրդային Հայաստանի մասին, Տարեգարձի յերգ, Արվարը:

12. Նորա Ռուսավելիի.— Վագրենսավոր (հատվածներ):

13. Միխայիլ Լեռմանտավ.— Մծիրի (հատվածներ), Պուշկինի մահը:

14. Մաքիմ Գորկի.— Մրրկահավի յերգը, Բագեյի յերգը, Դանկոյի սիրտը, Մայրը (հատվածներ):

15. Վլադիմիր Մայակովսկի.— 1917 թ. ապրիլին, բանաստեղծություն Խորհրդային պատպորտի մասին:

16. Միխայիլ Շոլխով.— Նագուշնով (հատված «Հերկած խոպան»-ից):

17. Համբի Բարբյուս.— Կրակ (հատված):

18. Ժողովրդական բանականաւրյան.— Սասունցի Դավիթ (կրծատ), Աշխատանքի յերգեր, Առածներ, Ասացվածքներ, Հանելուկներ, Անմահության խնձոր, Լենինի յերգը, Գութդ հայրական, Ստալին, Գովք Ստալինյան շեն աշխարհի, Լենին հսկան:

«Քրականության քրեստոմատիա»-յում արված նյութերի Հրականության գլուխաւագան, անցնել հետեւյալ գրողների կինսածավալով Շ-րդ գասարանում անցնել հետեւյալ գրողներից գլուխաւագան, գլությունները. Մ. Նալբանդյան, Հ. Պարոնյան, Շիրվանզագե, Հ. Թումանյան, Ա. Իսահակյան, Դ. Դեմիրճյան, Մ. Գորկի, Վ. Հ. Թումանյան, Ա. Խ. Խանհակյան, Մայրակովսկի:

ԱՆԳԻԲ ԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Աշակերտների խոսքի հարստացման և լավագույն գրական նմուշները հիշելու նպատակով, աշակերտներն ամեն մի գասարանում պետք ե անգիր սովորեն վորոշ քանակությամբ բանարանում պեղություններ և ամբողջական արձակ հատվածներ:

Ստորև տրվում ե ընտիր ստեղծագործությունների ցանկ:

ըստ դասարանների, վորով պետք ե զեկավարվեն դասատունները: Նշված արձակ գործերից և պոեմներից կտորների ընտրությունը թողնվում է ուսուցիչների հայեցողությանը:

ՀԵՆԳԵՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՐԱՆ

1. Բանասեղծություններ

Հակոբ Հակոբյան.— «Աշխատանքի յերգը», «Մեկ ել մեկ ել», «Մայիսեկյան յերգ», «Ստեփան Շահումյանին»:

Նայիրի Զարյան.— «Սաքը Միկինյան» (կրծատ):

Հովհաննես Թումանյան.— «Հին որհնություն», «Գութանի յերգը», «Թագավորն ու չարչին» (կրծատ):

Սուլեյման Սալյակի.— «Մտորումներ հայրենիքի մասին», «Լեռների յերկրի աղջիկներին»:

Ա. Ս. Պուշկին.— «Կովկաս», «Կալանավորը», «Զարդարելին», «Հուշարձան»:

Վիկտոր Հյուզուր.— «Բարիկադներում»:

2. Առակներ

Արաբեկ Խնկոյան.— «Բարեսիրտ աղվեսը», «Գայլն ու կատուն», «Ժաննաւակուտ»:

3. Սրակներ

Հովհաննես Թումանյան.— Հատվածներ «Բաջ նազարը» և «Վոսկի քաղաքը» հերիաթներից:

Ն. Ռասրավսկի.— «Պիտի կովենք մինչև վերջին շունչը» (կրծատ):

ՀՐԴ ԴԱՍԱՐԱՐԱՆ

1. Բանասեղծություններ յեղ պահմներ

Խ. Աբովյան.— «Ես գրքի ճամբի խրատը»:

Ղ. Աղայան.— «Ծողք անգեղ» (կրծատ):

Հովի Հովհաննիսիան.— «Ահա քեզ ձեռքս», «Մնաք բարով» «Սարն ի վեր», «Ժայռը», «Հատիկ»:

Ալ. Շատուրյան.— «Դիր», «Զմեռային գիշեր», «Սերմնացան», «Բանվորուհու որսը»:

Հովի. Թումանյան.—«Սասունցի Դավիթ» (կրծատ), «Հառաչանք» (կրծատ), «Նվեր Վրաստանի բանաստեղծներին»:
 Հակ. Հակոբյան.—«Ամբոխն իմ աշխարքը», «Յես այն եմ սիրում», «Մեռան չկրան»:
 Շուշանիկ Կուրդինյան.—«Բանվորները», «Հանգցըեք ջահերը»:
 Ն. Ա. Նեկրասով.—«Ելեկիսա», «Աղքատ ծերուկի յերդը»:
 Տարաս Շևչենկո.—«Կտակ», «Որոր»:
 Իլյա Շավինավաձեն.—«Թեկուղ և մեռնեմ», «Ու գեղեցիկ իւ աշխարհ», «Գարուն»:
 Սաբիր.—«Բեյնելմիլել», «Ծեր Պարտիզանը»:

2. Արձակ.

Պ. Պոռչյան.—«Նադյի մենախոսությունը» (կրծատ):
 Վ. Փափազյան.—«Արտը» (կրծատ):
 Դմ. Ֆուրմանով.—«Զապայելվ» վեպից կտորներ:
 Թոմեն Ռոլան.—«Ժան Քրիստոֆի մանկությունից» կտորներ:

3-րդ ԴԱՍԱՐԱՆ

1. Բանասեղծություններ յիվ պահմներ

Մ. Նալբանդյան.—«Յերդ Ազատության»:
 Ավ. Խահանջյան.—«Անհուն վրեժի և ատելության, «Մոքսիրտը», «Աղատության դանդը», «Սամա Մհեր» (կրծատ):
 Վ. Ցեղյան.—«Արևածագ», «Վերադարձ», «Ստեփան Շահումյանին»:
 Նայիրի Զարյան.—«Ստալին»:
 Գ. Սարյան.—«Տարեղարձի յերգը», «Ալվարո»:
 Շաբա Ռուսավելիք.—«Ավանդիի կտակ»:
 Մ. Լեմանտով.—«Մծիրի» (կրծատ):
 Վ. Մայակովսկի.—«Բանաստեղծություն խորհրդային պատպորտի մասին»:

ԽՈՐՀՈՎՅԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՍՏԵՂՄԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

«Լենինի յերգը», «Լենին հական»:
 Առող Աօխույժ.—«Գութդ հայրական, Ստալին»:

2. Արձակ

Պ. Գորկի.—«Բազեյի յերգը», «Մըրկահավի յերգը»:
 Գ. Սունդուկյան.—«Պեպո»-ի հատվածներից:
 Նար-դրս.—«Նեղ որերից մեկը»:

ԱՐՏԱԴԱՍԱՐԱՆԱԿԱՆ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԳՐՖԵՐԻ ՈՐԻՆԱԿԵԼԻ ՑՈՒՑԱԿ

5-րդ ԴԱՍԱՐԱՆ

Հակոբ Հակոբյան	«Հուտիլ բանաստեղծություններ»
Աս. Զորյան	«Մի կյանքի պատմություն»
Ղազարս Աղայան	1-ին մաս
Հովին. Թումանյան	«Հեքիաթներ»
Ս. Խնկյան	«Հեքիաթներ և պատմվածքներ»
Վ. Մարգարոս Աղայան	«Յերկերի»-ից ուսուցչի հանձնարարությամբ առանձին դըրվածքներ»
Վ. Միրաբյան	«Լավաբի վորսը»
Լ. Տոյսոյ	«Պոլիկուշկա»
Գևիշյառով	«Ուլումովի յերաղը»
Մ. Գուլի	«Պատմվածքներ»
Մարկ-Տվեն	«Թոմ Սոյերի արկածները»
Ժյուլ Վերն	«80 հազար կիլոմետր ջրի առակ»
Դ. Զարմանով	«Զապայելվ» (մանկաբառ)
Պ. Պոռչյան	«Հունոն», «Յեցեր»
Դ. Աղայան	«Յերկու քույր»
Մարտացյան	«Նոյի ագռավը»
Ալ. Շատուրյան	«Բանաստեղծություններ»
Հ. Թումանյան	«Յերկեր»
Արագի	«Արձակ պոեմներ»
Գ. Սարյան	«Մազմի յերգեր»
Ս. Վահանի	«Կապիտանի աղջիկը», «Քուրբովսկի»
Ա. Պաւելին	

6-րդ ԴԱՍԱՐԱՆ

Ի. Տուրգենևի
Լ. Տալսոյ
Մ. Գորկի
Սերաֆիմովիչ
Ռուսովսկի
Ի. Ճավինտվածեն
Լորդիպանիձեն

Շիլեր
Բարյուս
Ա. Դարե

«Վորուսորդի հիշատակաբանը»
«Հաջոյ Մուրադ»
«Մայրը»
«Յերկաթե հեղեղ»
«Խնչպես եր կոփվում պողպատը»
«Բանաստեղծություններ»
«Կորչի յեգիպտացորենի հանրապետությունը»
«Վիլհելմ Տելլ»
«Կրակը»
«Տարասկոնցի Տարտարինը»

Ռ. Ռոլան
Ֆիրզասի
Ժյուլ-Վերն

» »

«Ժան Քրիստոֆ»
«Մուստամ և Զոհրաբ»
«Գրանտ նախապետի վորդիները»
«Խոբհագոր Կղզին»

ԴՐԴ ԴԱՍԱՐԱՆ

Պ. Պուշկին
Հ. Թումանյան
Նար-Դոս
Հ. Պարանյան
Գ. Սաւենդուկյան
Ավ. Խոտիակյան
Ա. Շիրվանզադե
Գ. Դեմիրճյան
Ն. Զարյան
Շ. Ռուսրավելին
Սալիմկան Շեքրին

Մ. Գորկի

Դ. Ֆաւմանով

Ա. Ֆարեն

Մ. Շալիմով

Ա. Տոլսոյ

Վ. Շեքսպիր

Սերվանես

Վ. Հյուգոն

«Հացի խնդիր»
«Յերկեր»
Յերկերի 1-ին հատոր
» » »
«Խալթաբալա», «Պեպո»
«Բանաստեղծություններ» և
«Սասմա Մհեր»
«Պատվի համար»
«Նիզյար», «Մաշիղ»
«Մուշանի քարափը», «Հացավան»
«Վագրենավորը»
«Հեքիաթներ», «Մի քաղաքի պատմություն»
«Մանկություն», «Ծառայության մեջ», «Իմ համալսարանները»
«Խոռովություն»
«Զախարիասում»
«Հերկած խոսկան»
«Հացը», «Պետրոս 1-ին»
Լենինը հայ ֆոլկլորամ
«Վենետիկի վաճառականը»
«Դոն Կիխոտ»
«93 թիվը»

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

8—10-րդ ԴԱՍԱՐԱՐԱՆՆԵՐ

ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

I. Պատրիարքի խնդիրները

8—9—10-րդ դասարաններում, ի տարբերություն վոչ լրիվ միշտակարգ դպրոցի՝ գրականությունը ուսումնակրվում և պատմական-գրական պլանով: Գրականության դասավանդումը այդ դասարաններում նպատակ ունի՝ ծանոթացնելու աշակերտներին պատմական-գրական պրոցեսի հիմնական որինաչափությունների հետ:

Ոգտագործելով գեղարվիստական գրականության ընձեռնած մեծ հնարավորությունները, դասատուագրականակետները պարագագոր են իրենց դասերի ժամանակ դաստիարակել աշակերտների բոլորին աշխարհահայցը:

Ընկեր Ստալինի լորունգը բոլցեկմին տիրապետելու մասին գրականության դասատուն կարող և իրականացնել միայն այն գեղագումը, յերբ նա կոսկորի բոլցեկմին մոտենալ գրականության ուսումնասիրության հարցերին և նրա դասավանդմանը դպրոցում:

Վերջին ժամանակներս, մանավանդ 1936—37 ուս. տարուց սկսած, յերբ մեր դպրոցը ամբողջ յերկրի հետ միասին լայն կերպով տոնում եր մեծ բանաստեղծ Ա. Ս. Պուշկինի հիշատակը, գրականության դասավանդման մեջ ունենք անկատաձելի հաջողություններ. արտահայտիչ ընթերցումը և բերանացի սերտումը լայն տարածված յերեւույթ գարձան, ավելի խորը և մանրակրկիտ կերպով են անցկացվում յերկերի բովանդակության վերլուծումը: Ավելի պատրաստված ուսուցիչները տարեց-տարի ավելի լավ և

հետաքրքիր կերպով են տանում աշակերտների ինքնուրույն ստեղծագործական աշխատանքը:

Շատ դասատուներ արդեն կոնկրետ կերպով են դնում աշակերտների կոմունիստական դաստիարակության խնդիրները գեղարվեստական գրականության միջոցներով իրականացնելը և լավ արդյունքների յեն հասնում:

Սակայն մինչև այժմ ել է ու գրականության դասերի միջոցին բոլցեկման աշխարհահայցը գաստիարակության արգելք և հանդիսանում վուլգար սոցիոլոգիզմը, համանման պատմության դասավանդման ընագավառում հայտնաբերված այն թերություններին, վորոնք դատապարտված են ԽՍՀՄ ժողովությունում: Համ կ (բ) կ կենտկոմի կողմից՝ 1934 թ. մայիսի 16-ի՝ «Քաղաքացիական պատմության դասավանդման մասին ԽՍՀՄ գործում» վորոշման մեջ: Վուլգար սոցիոլոգիզմը գրողների ստեղծագործության շարագրման մեջ խեղաթյուրել և խեղաթյուրում է պատմական հեռանկարը, նա խեղաթյուրում է գրողների պատմական նշանակությունը: Այսպիս, որինակ վուլգար սոցիոլոգիզմի լույսի տակ այնպիսի գրողներ, ինչպիս Պուշկինը և Լեռմոնտովը ներկայացվում ենին միայն վորպես ազնվական գրողներ, նրանց համաժողովրդական նշանակությունը սքովում եր: Ստացվում եր գրական ստեղծագործության անմիտ քննախոսում (трактовка), վորպես դարաշրջանի եկոնոմիկայի ինչ վոր վերացական «արդյունք», զրողի և նրա ստեղծած հերոսների կենդանի գեմքը մահացվում եր և նույնպիս վերածվում վերացական սինեմայի: Դրանով իսկ գրականության դասավանդման նշանակությունը վաչնչացվում եր:

Դասատուներից վոմանք ընկնում են այլ ծայրահեղության մեջ, սահմանափակվելով գրողի գեղարվեստական միջոցների, գեղարվեստական վարպետության ձևուկան ուսումնասիրությամբ:

Այդ պարզամոլությունը (упрощенчество) հակառակ և այն պահանջներին, վորոնց պետք ե բավարարի գրականության դասավանդմը մեր խորհրդային գպրոցում:

Իսկ այդ պահանջները բղխում են գեղարվեստական գրականության կենինյան—Ստալինյան ըմբռումից և անցյալի կուլտուրական ժառանգության վերաբերյալ կենինյան—Ստալինյան ուսմունքից: Վ. Ի. կենինի ուսմունքը՝ պրոլետարական կուլտուրայի մասին, տեսության և պրակտիկայի միասնության

մասին՝ նրանց գարգացման մեջ, գրականության մասին, վորպես համապոլեստարական գործի մի օմասը» (Վ. Ի. Լենին, «Կուսակցական կազմակերպությունը և կուսակցական գրականությունը», հատոր 8-րդ, հրատ. 3-րդ, էջ 386—390), կուլտուրական ժառանգության քննադատական յուրացման մասին՝ պետք ենքնին վորոշի դրականության դասավանդման ամբողջ ուղղությունը:

Գեղարվեստական գրականությունը պետք են դիտվի վորպես իմացության, իրականության բացարձան ու գնահատման սպեցիֆիկ ձև: Զի կարելի հասկանալ թեմատիկան, գեմքերն ու գործող անձերը և գեղարվեստական միջոցները պատմական պրոցեսից դուրս, դասակարգային պայքարի պատմությունից դուրս:

Հենց գրականության այդպիսի ըմբռնումը նպաստում են յան բանին, վորպեսի գպրցական դասավանդման մեջ բավականաչափ առաջ մղվեն գեղարվեստական յերկերի իմացական, հասարակական-դաստիարակչական և գեղարվեստական կողմերը:

Գրականության պատմության դպրոցական կուրսի դասավանդման մեջ պետք են կիրառվեն այն ցուցումները, վորոնք տըրքած են կուսակցության և կառավարության գիրեկտիվներում՝ քաղաքացիական պատմության դասագրքերը կազմողներին:

Միջնակարգ գպրցի 8—10-րդ դասարանների աշակերտներին անհրաժեշտ ետակա և տալ՝ նրանց կողմից ուսումնասիրվող հեղինակների աշխատությունների կապակցությամբ, գրականության դարգացման կարեռագույն փաստերի կենդանի շարադրումը պարզեցվ ծրագրում մտցրած գրողների կյանքի և ստեղծագործության ուղղին, ցույց տալով նրանց կատարած դերն իրենց ժողովուների ազգային կուլտուրայի ձևավորման, զարգացման և իրենց ժողովրդի ազատագրական շարժման մեջ:

Այն գեղքերում, յերբ դա թույլ ետակա ծրագրի նյութը, անհրաժեշտ ելույթ կայ գրականության կապը ուսուական և յելքուպական գրականության հետ, ցույց տալ ուսուական կապական գրականության ազգեցությունը մեր գրականության զարգացման վրա (Թումանյան—Պուշկին—Նեկրասով, Սունդուկյան—Ռոտովսկի, Պարոնյան—Մոլիեռ և այլն):

10-րդ դասարանում, ուսումնասիրելով խորհրդային գրականությունը, անհրաժեշտ ետականացույց անել այն, վոր գաղափարական տեսակետից նա հանդիսանում ետական ամենաառաջավոր

գրականությունը, վորը մարտի յե կոչում ամբողջ աշխարհի ձնշված ժողովրդներին՝ ընդդեմ մարդը—մարդու միջոցով ամեն տեսակ շահագործման, վոր նա հակայական նշանակություն ունի պրոլետարական և հեղափոխական-դեմոկրատական գրականության զարգացման համար կապիտալիզմի յերկրներում:

Ցույց տալ խորհրդային գրականության հակայական սկզբանը քայլի հատկանշական կողմը և բարոյական-քաղաքական բարձրությունը, սովորեցնել աշակերտներին զոկելու հասկանալու գրականության զարգացման հիմնական ետապները՝ առանց պարզամոլության (սովորություն), առանց սխեմատիզմի—ահայս և միջնակարգ գպրոցի 8—10-րդ դասարանների դասընթացի պատմական-գրական խնդիրները:

II. Գրական յերկերի վերածուրյունը

5, 6 և 7-րդ դասարանների խնդիրը՝ հասնել գեղարվեստական յերկի բովանդակության խորը, լրջմիտ ըմբռնմանը—պետք են գրավի նաև 8—9 և 10-րդ դասարանների գրականության դաստիլի մեծ ուշագրությունը: Պետք են լավ ընթերցող դաստիլակեր վոր կարողանա վոչ միայն ըմբռնել յերկի ֆարուկան, այլ և հասկանա նրա մանրամասնությունները, կարողանա ստեղծագործական կարողությամբ վերաբարդել հերինակի կողմից նկարագրված գեղքերը, գործող անձերին, հասկանա նրանց փոխհարաբերությունները, յերկի գաղափարական կողմը:

Գրվածքի (կամ նրա առանձին հատվածների) ընթերցումը դասարանում չտիպազնց կարեոր ե:

Ընթերցումը կարող են ուղեկցվել ուսուցչի մեկնաբանություններով, լրտարանություններով: Այդ մեկնաբանությունները կարող են բազմազան բնույթ ուսենաց: Նրանց նպատակն են բացարձել տեքստի անհասկանալի տեղերը, աշակերտների ուշագրությունը գարձնել գրվածքի կարեոր մանրամասնությունների, գրողի վոճի առանձնահատկության վրա:

Դասարանում մեծ գրվածքներ կարդալու հասարավորություն և կարիք չկա: Ուսուի կարեոր ե դաստիարակել նաև տանը ընթերցելու կուլտուրան: Դասատվի տված հարցերի պատասխանները, գրվածքի առանձին եղանակների վերաբարդմումը ցույց կտան դասապիկին, թե ինչ չափով ու խորությամբ են յուրացված տեքստը աշակերտների կողմից:

Վերլուծման հետեւյալ ետապն են աշակերտների հիշողու-

թյան մեջ վերականգնել յերկի ամենակարևոր մոմենտները, ամբացնել դրանք, վորոշել թեմատիկան և յերկի հիմնական պրոբլեմները:

Դասարանային աշխատանքի մեջ հիմնականը, ամենաեյականը՝ դա գործող անձանց վերլուծումն է։ Այդ աշխատանքը պահանջում է տեքստի լավ յուրացումը, նյութը ընտրելու, այն սիստեմի յենթարկելու, ընդհանրացնելու, դատելու կարողություն։

Վերլուծման ժամանակ պարզվում է ամենագլխավոր գործող անձանց եյությունը, նրանց փոխարաբերությունները, դրվածքի կոմպոզիցիան, գրողի վոճի առանձնահատկությունները։ Աշակերտները պետք են իրենց համար պարզեն հեղինակի տեսակետը, նրա սոցիալ-քաղաքական, գաղափարական-փիլիսոփայական և եսթետիկական հայցացքները։

Այս բոլոր ասածները վերլուծման սխեմա չի հանդիսանում։ այստեղ նշվում է միայն այն, ինչ վոր պետք են հասկանալ յերկի վերլուծման տակ։ Աշխատանքի ընթացքը և մեթոդները կարող են լինել տարբեր։

Վորոշ գեպքերում յերկի վերլուծությունը նպատակահարմար է սկսել նրա թեման և կոնկրետ պրոբլեմները վորոշելով, այլ գեպքերում՝ ավելի լավ և սկսել պերսոնաժների վերլուծությունը և անալիզը վերջացնել յերկի թեման և գաղափարները վորոշելով։

Վերլուծման մեթոդները վորոշվում են նաև գրվածքի ժամային առանձնահատկությում։

Դրամատիկական յերկի վերլուծությունը տարբերվելու յենթիկական յերկի վերլուծությունից։ Դրամատիկական յերկի մեջ կա հատուկ կոմպոզիցիա, գործող անձանց հատուկ նկարագիր (համարյա ամբողջովին բացակայում են հեղինակային ընութագրերը)։ Հերոսների լիովի հատուկ նշանակությունը, պեյզաժի հատուկ գերը։ Այսպիսով ընթերցումը, վերապատմումը, ընութագրումն այս գեպքում պահանջում է աշխատանքի սպեցիֆիկ պրյումներ։

Ծուրահատուկ և նաև լիրիկական ստեղծագործությունների վերլուծությունը։ Հուղականությունը, յուրաքանչյուր բառի առավելագույն արտահայտչությունը, ոիթմի, հանգի առկայությունը, կերպարիսարակտերի յուրահատուկ ցուցադրումը, բանաստեղծի աշխարհագացումը—այս ամենը պահանջում է աշխատանքի իր մեթոդները։ յեթե դասարանում հարկավոր է վիպական գրվածքներից

հատվածներ կարդալ, ապա վոտանավորների ընթերցումը միանգամայն անհրաժեշտ է։ բանաստեղծական գրվածքների վոճակներից հատկապես պետք է լինի նուրբ և խնամքով։

Սակայն 8-10-րդ դասարաններում ուսումնասիրվող յերկերի բավականաչափ խորը իմաստավորումը անհնարին և նրանց մեկուսացված ուսումնասիրման գեղքում։ Անհրաժեշտ է ամենահիմնական գծերով գիտենալ ուսումնասիրվող գրողի կյանքի և ստեղծագործության ուղին։ Գրողի փոխհարաբերությունը իր ժամանակակիցների հետ, ուսուական և ուսարեթիրյա գրողների աղղեցությունը նրա ստեղծագործության վրա, գրողի տեղը գրականության պատմության մեջ, նրա նշանակությունն իր ժամանակակիցների և մեր ժամանակների համար—այս բոլոր հարցերը պետք են լուսաբանվեն, վորքան վոր դա թույլ և առլիս աշակերտների տարիքը, զարգացումը և տվյալ նյութին հատկացված ժամանակը։ Դրա հետ միասին ուսուցիչը անհրաժեշտությունից պետքի աշակերտների արտադրության վրա, նախապես առաջարկելով նրանց կարգաւորողի այն ամենագլխավոր գրվածքները, վորոնք ավելի բնորոշ են նրա ստեղծագործական ուղղու համար։

Պատմական-գրական նպատակներով շատ կարևոր և նաև, վորպես ինքնուրույն թեմա, տալ աշակերտներին կարևորագույն պատմական-գրական գարաշը ընդհանուր ընութագիրը։

Գրողի առանձին յերկի և ամերող ստեղծագործության ուսումնասիրությունը կապված է աշակերտների կողմից գրականության տեսությունից գիտելիքներ ձեռք բերելու հետ, վորոնք գրվում են գրական յերկերի ուսումնասիրության հետ համընթաց։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՄԻԶՆԱԿԱՐԴ ԴՊՐՈՑՈՒԽՄ

1. Ստեղծել գպրոցականի մեջ գեղարվեստական-գրական յերկի գիտակցական ըմբռնման կուլտուրա:

2. Հաղորդել նրան քննադատական գրականությունը հասկանալու համար անհրաժեշտ հիմնական տերմինորդիկան։

3. Պատրաստել նրան ինքնուրույն ընթերցման և գրական-գեղարվեստական յերկի վերլուծման համար։

4. Գաղափար տալ գրականության հիմնական առանձնահատկությունների մասին, հասկանալու նրա հասարակական Փունկցիան։

5. Տալ պատկերացում պատմական-գրական պըոցեսի վերաբերյալ, այսինքն՝ տալ գրական յերևություններն ընդհանրացնելու հմտություններ:

Դրան համապատասխան 8—10-րդ դասարանների աշակերտները պետք է ձեռք բերեն գրականության տեսությունից հետեւյալ գիտելիքները.

1. Գրականությունը վորպես կյանքի արժացոլում: Ընդհանրացման նշանակությունը գեղարվեստական գրականության մեջ: Կերպար (օբրազ),

2. Գեղարվեստականություն: Կենսական ճշմարտությունը վորպես գեղարվեստականության հիմք:

3. Գրականության իմացական և դաստիարակչական գերը: Գրականության ողտագործումը մարքսիզմի կլասիկների կողմից: Գրական յերկի իդեան և թեման:

4. Մարդու պատկերումը գրականության մեջ: Գիմանկար (պորտրետ). բնութագիր: Սյուժեն վորպես մարդու պատկերում գործողության մեջ («История характера»—М. Горький): Գրական յերկի կառուցվածքը (композиция): Գրողի աշխատանքը բնովի վրա—գործող անձանց վեցուն, հեղինակի լեզուն:

5. Բառապաշար (лексика). բառի ուղղակի և փոխաբերական նշանակությունը (փոխաբերություն—տրոպ):

6. Ֆիգուրայի շարահյուսությունը (ինվերսիա, ելլիպսի և այլն), առողմանություն, պառզա:

7. Տաղաչափության հիմունքը. հիմնական տները, հանգը և հնչունային կրկնությունները, ոիթմը, վոտանավորի հիմնական չափերը, արձակ բանաստեղծությունը:

8. Հիմնական ծանրերը. քնարերգություն, դրամա, վիպարություն:

9. Վոճ և մեթոդ:

10. Թնակատական սեալիզմ:

11. Սոցիալիստական ուսալիզմի բնորոշ առանձնահատկությունները:

12. Գրական պրոցես և գրական քաղաքականություն:

13. Վ. Ի. Լենինը և Ի. Վ. Ստալինը գրականության մասին:

Յուրաքանչյուր. յերկի ուսումնասիրությունը պետք է վոչ միայն հարսացնի աշակերտների գիտելիքների պաշարը, բարձրացնի նրանց ընդհանուր կուլտուրան, այլև պատվաստի նրանց

մեջ կուլտուրական լեզվի, գրքի վրա աշխատելու, հեղինակելու, բանավոր զեկուցումներ անելու ունակությունները:

Աշակերտների հիջողությունը պետք է հարսացնել բերանացի սովորեցնելով նրանց ամենացայտուն գեղարվեստական յերկերը թե վոտանավոր, և թե արձակ:

III. Աշխատանիքի սիսեմը

Նախ և առաջ դասատուն պետք է ապահովի աշակերտների ծանոթությունը գրական աշխատությունների մինիմումի հետ, վոր անհրաժեշտ և տվյալ դասարանի գալութացի համար: Տարվա սկզբին, ավելի լավ և արձակուրդներից առաջ, ուսումնական տարվա վերջին, դասատուն ծանոթացնում և աշակերտներին առաջիկա գալութացի, նրա խնդիրների ծավալի հետ, մատնանշում ե՝ արտագարողական ընթերցման հոմար պարտադիր և լրացուցիչ գրականության ցուցակը: Տարվա ընթացքում նա պետք է հետեւ աշակերտների սիստեմատիկ ընթերցման:

Գրականության դասերը կառուցվում են տարբեր կերպով, նոյնած նյութին և ուսումնական աշխատանքի նպատակներին:

Նյութի գդալի մասը, մանավանդ 9—10-րդ դասարաններում դասատուն շարադրում և աշակերտների համար դասախոսության ձևավորման մեջ: Տեղեկությունները՝ դարաշրջանի, գրողի կյանքի ու ստեղծագործական ուղղությունը, նրա սոցիալ-քաղաքական և փիլիսոփայական հայացքների մասին, պետք է շաբաթը վասահասության միջոցով: Իսկ դասախոսության մեջ վորոշ զեղպերում կարելի յեւ տալ և յերկի կամ նրա մի մասի վերլուծությունը, գործող անձանց բնութագրերը և այլն՝ նպատակ ունենալով վարժեցնելու աշակերտներին գրական տեքստի վրա աշխատելուն:

Դասատուցի դասախոսությունը իր բովանդակությամբ, ծավալով և լեզվով պետք է համապատասխանի յուրաքանչյուր դասարանի աշակերտների գիտական մակարդակին և ունակություններին. պետք է տալ դասախոսության պլանը, ցույց տալ այն գրանցելու յեղանակները: Դրա հետ միասին մեծ տեղ պետք է բռնեն ոժանդակ-զննական պիտույքները: 8-րդ դասարանում դասախոսությունն իր բնույթով մոտ պետք է լինի պատմելու ձևին և պարզորոշ կերպով պետք է բաժանված լինի մասերի: Դասադասախոսությունները, նոյնած նյութին, կարող են լինել ավյալ թեմայի ուսումնասիրության սկզբին, միջին կամ վերջին:

Զանազան տեսակի ընթերցանության, դասերը, դասատույի ընթերցումը, պատրաստված աշակերտների ընթերցումը, բերանացի ընթերցում, զանազան դասատույի մեկնաբանություններով — պետք են ուղյան զգալի տեղ գտնեն:

Գրական յերկի կամ նրա մի մասի վերապատմումը պետք են անցնացվի և բարձր դասարաններում, բայց ավելի բարդ խընդիրներով, քան ցածր դասարաններում։ Դրվածքի դաստիարակությունը վերածման դասերը, վորոնք անց են կացվում զրույցի ձևով, նախապես պատրաստված պլանով ու նյութերով, աշակերտների հաղորդման ձևով, պետք ել լայն կերպով գործադրել։

Առաջերաների ինինուրույն տօխատանին անհրաժեշտ են հատուկ ուշադրություն դարձնել։ Պետք են դաստիարակել ուշադիր և խորուն կարգալու և տեքստի վրա աշխատելու ունակություններ, տվյալ թեմայի համար անհրաժեշտ մատերյալներ հավաքելու և այն ընդհանրացնելու կարողություն։ Սակայն ուսուցչի ուշադրության կենտրոնը միայն գեղարվեստական գրքի վրա չպետք ել լինի։ Աշակերտը պարտավոր է սովորել յուրացնելու դասարքի նյութը և ծրագրում ցույց տրված քննադատական հոդվածները։

Դասի ժամանակ ստացած նյութը պետք է յուրացվի և ամրապնդվի դասագրքի ընթերցման միջոցով։ Սակայն դասատուն չպետք ել միայն «հանձնարարի» դասագրքի մշակած նյութը։ Դասագրքի նյութը պետք է որգանապես կապակցված լինի աշակերտի այլ ոշխատանքի հետ։ տեքստի վրա, պերսոնաժի բնութագրման վրա, քննադատական հոգվածների վրա կատարված աշխատանքի հետ։

Դասատվի կողմից դասագրքերը կարող են ոգտագործվել և թեմայի սկզբին։ Որինակ, գրողի կենսագրությունը կարող է յուրացվել դասագրքով, առանց դասատվի կողմից նախապես յուրացվելու, իսկ դասատուն հետագայում կարող է միայն լրացնել և ընդլայնել դասագրքից աշակերտի ստացած տեղեկությունները։

Աշակերտների տնային և դպրոցական աշխատանքը, բացի գեղարվեստական յերկի տեքստի յուրացումից, դասատվի, դասագրքի և այլ ձեռնարկների տեղեկություններից, պետք ել կայացնա նաև զանազան տեսակի բանավոր հաղորդումների և գրավոր աշխատանքների պատրաստման ու կատարման մեջ։ Բանտվոր վոր մեծ հաղորդումները և գրավոր աշխատանքները պետք

են տրվեն վոչ միայն թեմայի վերջում, վորապես ստուգողական, այլև գրական յերկի վրա կատարված աշխատանքի ժամանակ, վորապես համապատասխան ունակությունների վարժություններ։

8—10-րդ դասարաններում ինքնուրույն գրավոր ածխատանքների (շարադրությունների) գրվածքով գրականության դասատուն պետք ել աշակերտներին տա հետեւյալ ունակությունները։ 1) տրամաբանություն, հետեւղականորեն շարադրել յուր մտքերը (կարողանալ գրել պլանով), 2) կարողանալ հիմնավորել պատճառաբաններ զարգացած մտքերը, 3) կարողանալ յեղրակացություններ և ընդհանրացումներ անել, 4) վճռական տեսակետից ճիշտ ձևակերպել իր մտքերը։

Դրավոր աշխատանքների թեմատիկան և նրանց ծավալը պետք ել հետզհետեւ բարդանա 8-ից 10-րդ դասարան անցնելուն համընթաց։

Լավագույն ուսուցիչների փորձը ցույց է տալիս, վոր 8-րդ դասարանում գրավոր աշխատանքների ամենանպատակահարմար տիպերը հանդիսանում են։ 1) գրվածքի բովանդակության կապակցված շարադրում, 2) մի գործող տնձի կամ գործող անձանց մի խմբի, յերկի մեջ պատկերացված միջավայրի կենցաղի պարզ (նկարագրական) բնութագրեր։

9-րդ դասարանում հնարավոր է անցնել ընդութագրերը վերլուծելուն՝ ընդհանրացումներ անելով։

10-րդ դասարանում, շարունակելով 9-րդ դասարանի համար նշված թեմաները, անհրաժեշտ են առաջադրել աշակերտներին գրավոր շարադրություններ՝ ավելի լայն ընույթի թեմաներով, վորոնք նկատի ունեն վոչ միայն առանձին յերկեր, այլև գրողի ստեղծագործության ամրող մի ժամանակաշրջան (որինակ, «Խորանակիզմի բնույթը Մ. Դորիկու ստեղծագործության սկզբանական շրջանում»). այդ դասարանում հարկավոր է տալ և բնութագրեր, վորոնք պահանջում են պերսոնաժների խորացրած վերլուծություն և վորոշ ընդհանրացումներ (որինակ, «Դավիթովը վորպես կազմակերպող և դաստիարակող բոլցերի տիպը—ըստ Մ. Շոլոխովի «Հերկած խոպան» վեպի»)։

Սկսած 9-րդ դասարանից անհրաժեշտ են առաջադրել աշակերտներին գրական-հրապարակախոսական թեմաներ, վորոնք մեծ դաստիարակչական նշանակություն ունեն (որինակ. «Խորհրդային հայրենասիրություն» և այլն)։

Տնային աշխատանքների համար հնարավոր է (հետեւյալ

պայմանների առկայության դեպքում, արտադպրոցական ընթերցանության սխտեմատիկ կազմակերպում, բավականաչափ քաշակությամբ տեքստերի գոյությունը՝ դպրոցական գրադարանում՝ առաջարկել շաբադրության թեմաներ, վորոնք նկատի ունեն աշակերտների արտադպրոցական ընթերցանությունը (որին նաև, «Հ. Հակոբյանի ստեղծագործական ուղին», «Խոմանտիզմը և ռեալիզմը Մ. Գորկու ստեղծագործության մեջ» և այլն):

Աշակերտներին հնարավոր ե սովորեցնել գրելու շաբադրություններ, միայն այն դեպքում, յերբ 8—10-րդ դասարաններում տալիքա ընթացքում արվեն բավականաչափ գրավոր աշխատանքներ: Լավագույն ուսուցիչների վորձը հետեւալ կերպ ե վորոշում գրավոր աշխատանքների քանակը. 8-րդ դասարանում՝ վոչ պակաս քան 5 դասարանային և 3 տնային շաբադրություն, տնային շաբադրություններն այդ դասարանում արվում են յերկրորդ կիսամյակում, առաջին կիսամյակում անց են կացվում դասարանային—վարժողական և ստուգողական շաբադրություններ. 9-րդ դասարանում վոչ պակաս 4 դասարանային և 4 տնային շաբադրություն, 10-րդ դասարանում՝ 6 դասարանային և 2 տնային շաբադրություն. տնային շաբադրությունները տրվում են առաջին կիսամյակում, վորովճետե յերկրորդ կիսամյակում աշակերտները զբաղված են գլխավորապես ավարտական քննություններին նախապատրաստվելով:

Դասարանային շաբադրությանների համար դպրացի վարչությանը պետք է սահմանի յերկուական ժամ միանգամբ:

Դասատուն պետք ե աշակերտների աշխատանքի ամենորյահաշվառում կատարի, գնահատելով նըանց գիտելիքները և հըմտությունը՝ դասընթացի ըոլոր հատվածների հիման վրա: Թեման վերջացնելուց հետո պետք ե կրկնել նըա ամենաելական մոմենտները և նույնպես հաշվի առնել, թե վորչափով այդ թեման յուրացված ե աշակերտների կողմից:

Տարվա վերջին կրկնվում են դասընթացի ամենաբարդ բաժինները: Տարին վերջանում և ստուգողական քննություններով գրավոր և բանավոր:

Դպրոցական աշխատանքներին ոժանդակելու նպատակով պետք ե ծավալին նաև արտադպրոցական աշխատանքները: Դասատուն անպայման պետք ե կազմակերպի գրական խմբակ, վորի պարապմունքների ժամանակը աշակերտներն ստանում են՝ ծրագրով չնախատեսնված լրացուցիչ գիտելիքներ և ունակություն-

ներ: Խմբակը կարող ե խթանել նաև աշակերտների անձնական ստեղծագործությանը:

Դպրոցը 10-րդ դասարանի այնպիսի շրջանավարտներ պետք ե տա, վորոնք բավականաչափ գեղարվեստական գրականություն են կարդացել գիտեն գրականության պատմության հիմնական փաստերը և տիրապետում են ճիշտ գրական լեզվին:

ԾՐԱԳԻՐ

8-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

Ժաղավարական բանակայական (2 ժամ)

Գրադափար գեղարվեստական գրականության և նըա սպեցիֆիկայի մասին: Գաղափար եղոսի մասին: Ժողովրդական բանահյուսությունը (Փոլկլորը) վորպիս մասսայական ժողովրդական գեղարվեստական ստեղծագործություն: Ֆոլկլորի առանձնահատկությունը գրավոր, գեղարվեստական գրականության համեմատությամբ: Ժողովրդական բանավոր ստեղծագործության բազմազանությունը, թեմատիկան, սյուժեները, ժանրերը: Վ. Ի. Լենինը ժողովրդական բանահյուսության մեջ՝ «Ժողովրդի իզգերի և ակնկալումների» արտահայտությունների մասին: Ֆոլկլորը՝ ձևով ազգային բովանդակությամբ՝ սոցիալիստական կուլտուրայի ստալինյան տեսության լույսի տակ:

Մ. Գորկին—մարդկության աշխատանքային գործունեյության հետ ֆոլկլորի ուսեցած, կապի, ժողովրդական բանավոր ստեղծագործության իդեական խորության և գեղարվեստական կատարելության մասին: Ֆոլկլորի, ժողովրդական եղոսի աղցիցությունը գրավոր գեղարվեստական գրականության վրա: Ֆոլկլորի հասարակական-սպատմական իմացական նշանակությունը. «Հի կարելի գիտենալ աշխատավոր ժողովրդի բուն պատմությունն առանց գիտենալու ժողովրդական բանավոր ստեղծագործությունը». «Ժոլկլորն ամենահին ժամանակներից անբաժան և յուրահատուկ կերպով հետեւալ և պատմությանը» (Մ. Գորկի):

Ա. Համառոտ ակնարկ հին օրջանի հայ գրականության պատմության վրա (3 ժամ)

Հայաստանի քաղաքական վիճակը 5-րդ դասարանում: Գրեքի գյուտը 5-րդ դարում և դրա հասարակական-կուլտուրական

պըոգբեսիվ նշանակությունը. հայերեն գրականության ստեղծվելը: Ազգբնական ցըանուու պատմագրության ուժեղ զարդանալը և նրա խոշոր ներկայացուցիչները (Փավստոս, Խորենացի և ուրիշները): Աշխարհիկ գեղարվեստական գրականության նկատմամբ հայ յեկեղեցականության ժիտական վերաբերմունքը և դրա պատճառները: Բանավոր ձևով ստեղծագործված ժողովը գական հիմն եպոսի մասցը նատկապես Խորենացու պատմության մեջ (Տորք Անգեղի, Վահագնի, Արտավազդի մասին և այլն): Յեկեղեցական-կրոնական բանաստեղծությունը: Նարեկացի Բանաստեղծության աշխարհականացման տարրերը Նարեկացու «Տաղերի» մեջ: Բանաստեղծությունը Նարեկացուց հետո մինչև 13-րդ դարը:

III. Հայ ժողովրդական եպոսը. «Սասնա ծոեր» (2 ժամ)

«Սասնա ծոեր» հայ ժողովրդական եպոսի ստեղծման ժամանակաշրջանը: Եպոսի ժամանակին առանձնահատկությունները. «Սասնա ծոեր»-ի վարյանաները և առանձին ամբողջական ճյուղերը: Արարական բոնակալության տիրապետության և առհասարակ ոտար նվաճողների և կեղեքողների դեմ հայ ժողովրդի մղած հերոսական պայքարի արտացոլումը «Սասնա ծոեր»-ի մեջ: Դավթի ճյուղը: Դավթիքը, վորպես աշխատավոր ժողովրդի հերոսականության մարմնավորող: Մորտ Մելիքը, վորպես բոնակալ և կեղեքիչ. «Սասունցի Դավթ» հատվածի գեղարվեստական կատարելիությունը և ամբողջականությունը: Դավթի բնավորության գծերը: «Սասնա ծոեր»-ի զանազան մասերի մշակումները մեր նոր գրականության մեջ (Թումանյան, Ավետիք Իսահակյան և ուրիշները):

Ն Յ Ո Ւ Թ Ե Ր

«Սասունցի Դավթ» (Մոկաց վարյանն)

IV. 13—18-րդ դարերի հայ առևարեիկ գրականությունը

1. Առակներ, նովելներ և անեկդոտներ (2 ժամ): 13-րդ դարից միսած գրականության լեզվի և բովանդակության աշխարհականացման հասարակական-պատմական պատճառները: Հայ աշխատավորության դեմոկրատիայի ուժեղանալն ոտար և տեղական ֆեոդալ

կեղեքիչների դեմ մղած պայքարում: Աշխարհիկ գրականության հիմնական ժամանակը այդ շրջանում՝ առակներ, նովելներ և լիրիկական բանաստեղծություններ:

Ժողովրդական և թարգմանական առակներից ժողովածուներ կազմելը:

1. Կարդան Այգեկցի (3 ժամ) (XII—XIII դ.): Կենսագրական տեղեկություններ: Այգեկցին վորպես առակների առաջին ժողովածու կազմողներից մեկը: Այգեկցու ինչպես և հետագա դարերում Այգեկցու հետեւությամբ ուրիշ հեղինակների կողմից կազմած առակների ժողովածուների մեծ մասի ժողովրդական ծագումը և եյությունը:

Բուն ժողովրդական ստեղծագործություն հանդիսացող առակների, նովելների և անեկդոտների բովանդակության հատկանշական գծերը—ուժեղ սատիրա ուղղված հոգևորականության և աշխարհիկ գեղարվածականության դեմ: Ճնապարհների, տերտերների շահամոլության և անառակ վարքի մերկացումը և նույնիսկ շատ գեղքերում ուղղակի ժիտական վերաբերմունքը դեպի քրիստոնեյական վարդապետությունը: Առակների, նովելների ժամանակին և գեղարվեստական մշակման առանձնահատկությունները: Առակների ժեմաների ոգտագործումը հայ նոր գրողների կողմից. (որինակ՝ Թումանյան, «Մի կաթիլ մեղր», «Անբուն կկուն» և այլն):

Ն Յ Ո Ւ Թ Ե Ր

- «Գող քահանան և այրին»
- «Այրին և կոմի»
- «Յեղն ու ձին»
- «Յեկեղեցի և ջրաղաց»
- «Աղքատ և ավետարան»
- «Գառն և փողահար գայլ»
- «Աղվես և խեցգետին»
- «Աղվես և կաքաղ»
- «Արծիվ և կաքաղ և բզեզ»
- «Աղվես և թղթատար գայլ»
- «Ոձ և հողագործ»
- «Իշխան և այրի»
- «Հիմար և ձմերուկ»
- «Կաշառառու քահանա»
- «Միայնակյաց և գամբո շուն»

2. Ֆ թ ի կ (13-րդ դար) (4 ժամ): Կենսագրական տեղեկություններ: Ֆրիկի ստեղծագործության գեմով կրատական ընույթը. Հայաստանը Մոնղոլական տիբապետության շրջանում, այդ շըմ ջանի հայ աշխատավորության սոցիալական ծանր վիճակի արտացոլումը Ֆրիկի պոեզիայի մեջ: Ֆրիկը վորպես ֆեռագալական հասարակական հարաբերությունների քննադատ, նրա ցառումն ու բողոքը ոտար լծի և սոցիալական անարդարությունների դեմ: Ֆրիկը վորպես հայ աշխարհիկ բանաստեղծության սկզբնավորողներից մեկը. կրոնական աշխարհայացքի որյեկտիվորեն ժխտումը մի քանի վոտանավորների մեջ և բանաստեղծության կրոնական քարացած ձեերի խորտակումը Ֆրիկի կողմից:

Ժողովրդական բանահյուսության և Ֆրիկի ստեղծագործության սերտ կապը: Ֆրիկի վոտանավորների ուժեղ պաթուք: Ֆրիկի ուստիշմը:

Ն Յ Ո Ւ Թ Ե Ր

Բնդդեմ ֆալագին
Բան ի Ֆրիկ գրքույն (գանգատ):

3. Կոստանդին Ցեղանկացի (13—14-րդ դար) (3 ժամ): Կենսագրական տեղեկություններ: Պատմական տեղեկություններ նրա ապրած ժամանակաշրջանի մասին: Կոստանդին Ցեղանկացին վորպես (Ֆրիկի հետ միասին) աշխարհիկ բանաստեղծության խոշոր սկզբնավորողներից մեկը: Ցեղանկացուց սկսվող՝ սիրո և գեղեցիկ բնության թեմաները քնարերգության մեջ. դրանց պրոդրեսիվ նշանակությունը: Ցեղանկացու բնապաշտական և սիրային բանաստեղծությունները, վորպես ֆեռագալական իրականության և կրոնական-ուստիշմին աշխարհայացքի հակադրություններ:

Ցեղանկացու վոտանավորների վառ կոլորիտը: Ցեղանկացին վորպես վոտանավորների ձեւ խոշոր վարպետ: Ժողովրդական բանահյուսության լիուլի ոգտագործումը Ցեղանկացու կողմից: Իրանական բանաստեղծությունից կրած աղդեցությունը:

Ն Յ Ո Ւ Թ Ե Ր

Տաղ սիրո
Տաղ գարնան
Տաղ սիրո ապահիկ

4. Նորմակե Քուչակ (16-րդ դար) (3 ժամ): Կենսագրական տեղեկություններ: Քուչակը, վորպես Ֆրիկից և Յերդնկացուց հետո գարգացող աշխարհիկ բանաստեղծության ամենախոշոր ներկայացուցիչը: Քուչակի ստեղծագործության թեմաները: Քուչակն իրեւ սիրո և զարթության յերգիչ, նրա հումանիզմը: Քուչակի ստեղծագործության ժողովրդայնությունը: Իրական կյանքի պաշտամունքը նրա վոտանավորներում՝ հակառակ ֆեռագալական կրոնական գաղափարախոսության:

Քուչակի ուստիշմը: Քուչակի վոտանավորների ուժեղ պատկրագործությունը և վառ կոլորիտը:

Ն Յ Ո Ւ Թ Ե Ր

Քառյակներ

(Սիրո, պանդիստության, խոհական) (20 հատ)

5. Սայաթ-Նովա (18-րդ դար) (4 ժամ): Պատմական տեղեկություններ Սայաթ-Նովայի աշլրած ժամանակաշրջանի մասին: Կենսագրական տեղեկություններ:

Սայաթ-Նովան վորպես աշուղական բանաստեղծության ամենամեծ վարպետը. նրա ստեղծագործության ժողովրդական եյությունը: Ցերեք լեզուներով՝ հայերեն, վրացերեն, աղբյուջաներեն գրելու հանգամանքը, վորպես այդ բանի ապացույցներից մեկը: Սայաթ-Նովան իրեւ սիրո յերգիչ: Նրա թախիծը, վորպես արդյունք գեղովալական տիրող կարգերի նկատմամբ ունեցած խորը գժգոհության: Սայաթ-Նովայի հումանիզմը: Սայաթ-Նովան վորպես հայկական, վրացական և աղբյուջանական ժողովրդական յերգերի գեղեցկությունները վարպետորեն ոգտագործող. նրա վոտանավորների յերաժշտականությունը և պատկերավորությունը: Սայաթ-Նովայի լեզվի արեվելյան վառ կոլորիտը:

Ն Յ Ո Ւ Թ Ե Ր

Քատմանչա

Դուն են գլխեն

Արի համով ողլուղ արա

Աշխարհումս ախ չիմ քաշի

Քանի վուր ջան իմ
Բլբուլի հիդ
Ռւստի կուգաս
Յես մի դարիք
Մե խոսք ունիմ:

Աբովյանի մյուս գրվածքները («Պարապ վախտի խաղալիք», «Ովսաննա», «Թուրքի աղջիկ»), «Հազարփեշեն») և նրանց արժեքը:
Աբովյանի թողած աղդեցությունը հայ հետագա գրողների վրա,

Ն Յ Ո Ւ Ի Թ Ե Բ

Վերք Հայաստանի (Հատվածներ)
Թուրքի աղջիկը (կրծատ)

2. Միքայել Նալբանդյան (1829—1866) (8 ժամ): Կենսագրական, պատմական տեղեկություններ Նալբանդյանի ապրած ժամանակաշրջանի մասին: Նալբանդյանը վորպես հայ գեմոկրատիայի հեղափոխական գաղափարախոսը: Խուսական հեղափոխական դեմոկրատիայի (Հերցեն, Զերնիչևսկի) ազգեցությունը Նալբանդյանի վրա: Նալբանդյանի հրապարակախոսության յերկու շրջանի մասին: առաջին՝ «Հյուսիսափայլ»-ին աշխատակցելու շրջանում, նրա տեսակետների հյական տարբերությունը Նալբայանից (Ֆրանս, բուրժ. հեղափոխության), 18-րդ դարի լուսավորիչների, ցարիզմի գնահատման, «ազգ» գաղափարի լմբանման նկատմամբ և այլն): Յերկորդ շրջանում՝ «Հյուսիսափայլ»-ից անջատվելուց հետո, Նալբանդյանի վերջնականապես գեմոկրատ հեղափոխական գառնալը: «Յերկու տող» և «Յերկրադործությունը վորպես ուղիղ ճանապարհ» աշխատությունները՝ հողային հարցի հեղափոխական ուղիով լուծելու պահանջ, ազգային հարցում գեմոկրատական տեսակետի պաշտպանում, ֆեոդալականության, բուրժուական կարգերի, լիբերալիզմի և ցարիզմի ռեակցիոն քաղաքականության, ինչպես նաև սուլթանական բռնակալության մերկացումը և խիստ քննադատություն: Նալբանդյանի գաղափարական բարեկամները թյուրքահայերի շրջանում (Հ. Սվաճյան և այլն): Յերկրադործության՝ վորպես ուղիղ ճանապարհ տեսակետի ուսուակի բնույթը:

Նալբանդյանի գեղարվեստական ստեղծագործությունները: Նալբանդյանը վորպես աշխարհաբար քաղաքական պոեզիայի և ռեակտական վեպի սկզբնավորող: «Մեռելահարցուկ» վեպի վերլությունը: Բուրժուազիայի քննադատական պատկերը վեպում: Նալբանդյանն իրեն քննադատ: Ռեակտական վեպի սկզբանը արծարծումը «Սոս և Վարդիթեր» վեպի մասին գրած կրիտիկայում: Նալբանդյանի լեզվաշնարարական հայացքները.

V. Ն Ո Ր Գ Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

(19—20 դար)

1. Խաչատրյան Աբովյան (1804—5—1848) (6 ժամ): Կենսագրական: Պատմական տեղեկություններ Աբովյանի ապրած ժամանակաշրջանի հայ հասարակական կյանքի մասին: Աբովյանը վորպես հայ նոր գրականության սկզբնավորող և աշխարհաբար վեպի հիմնադիր: Գրաբարի կուլտի և կեղծ կլասիցիզմի ջախջախումը Աբովյանի կողմից: «Վերք Հայաստանի» վեպը իբրև խոզոր գրական-պատմական պրոգրեսիվ յերեսույթ: Այդ վեպի գեղարվեստական արժանիքները, ուեալիզմի տարբեր, պլաստիկ պատկերավորության, վորոշ սկզբունքի համաձայն՝ հետեւողական կոմպոզիցիա, ժողովրդական եպոսի և աշուղական բանաստեղծության վոճի ոգտագործումը, տեղական կոլորիտի ստեղծում և միշտաքերի ու տեսարանների դինամիկ նկարագրություն և այլն: Վեպի գեղարվեստական թյուրքյունները—կողմնակի շեղումներ, հրաշապատում գեղքեր և այլն: Պարսիկ շահերի բռնակալական տիրապետության ուժեղ քննադատություն:

Աբովյանի աշխարհայացքի հիմնական գծերը՝ հումանիզմ, լուսավորության քարոզ, լրագրաշտություն, ուսուական որիենտացիա, ժողովրդական հայրենասիրություն: Աբովյանը վորպես նոր դպրոցի ու մանկավարժության ուսուակիրա: Աբովյանի կրած աղդեցությունները ուսուական և յեկրոպական գրականությունից:

Նալբանդյանի հրապարակախոսության վայրուն վոճը: Նալբանդյանի թողած աղջեցությունը հայ գրականության վրա:

Ն Յ Ո Ւ Թ Ե Ր

Վազող ջրին
Մանկության որեր
Բանաստեղծ
Մեռելահարցուկ

Յերկրագործությունը վորպես ուղիղ ձանապարհ (հատվածներ):

Կրիտիկա—Սոս և Վարդիթերի մասին (կրծատ):

Պերճ Պուսյան (1837—1907) (6 ժամ): Կենսագրական: Պուսյանը վորպես սոցիալական վեպի հիմնադիր: 60—80-ական թվականների հայ գյուղի ծանր վիճակը և դրա արտացոլումը Պուշյանի վեպերում («Հացի խնդիր», «Ճիցեր», «Հունոն» և այլն): Պուշյանը, վորպես գյուղական աշխատավոր մասսաների ձգտությունից արտահայտէց: Կուլակության, վաշխառուների, հոգևորականության և ցարական չինովակների գիշատիչ գեմքի և ստորարքների մերկացումը: Պուշյանի ուսալիզմը և նրա վեպի բարձր գեղարվեստական արժանիքները (գյուղական իրականության հարուստ պատկեր, ցեցերի հաջող գծված գեմքեր՝ Միկուտան Սուքոն, Բալասան աղան, Բղդեն և այլն): Ժողովրդական բանահյուսության լայն ոգտագործումը և տեղական վառ կոլորիտի ստեղծումը: Պուշյանի վեպերի գեղարվեստական թերությունները (ոռմանտիզմի տարրեր՝ հանդույցների լուծման ժամանակ, կողմանակի շեղումներ և այլն):

Դեմոկրատական ապստամբական տրամադրություններ Պուշյանի վերջին գործերում («Հունոն»): Պուշյանի թողած աղջեցությունը հետաքա գրողների վրա

Ն Յ Ո Ւ Թ Ե Ր

Հացի խնդիր (հատվածներ)
Ցեցեր (հատվածներ)
Հունոն (հատվածներ)

4. Վազարս Աղայան (1840—1911) (6 ժամ): Կենսագրական: Աղայանը վորպես հայ գյուղացիական գեմոկրատիայի արտահայտիչ: Աղայանի խոշոր գերը գրական լեզվի զարգացման բնագա-

վառում: Նրա ստեղծագործության բազմազանությունը: Աղայանն իբրև բանաստեղծ: Այս բաժնում համեմատաբար մանկական բանաստեղծությունների ուժեղ լինելը: Աղայանն իբրև մանկական գրականության հիմնադիր: Աղայանն իբրև վիպասան: «Յերկու քույր»-ը վորպես առաջին մաքուր գրական լեզվով գրված աչքի ընկնող վեպ մեր գրականության մեջ: Նույնը՝ իբրև առաջին սոցիալական վեպերից մեկը: 60—70-ական թվականների հայ գյուղի հասարակական հարաբերությունների պատկերը վեպւմ: շահագործվող գյուղացիացության պայքարը հողի համար: Վեպի հերոս Արգումանը վորպես ապստամբ գյուղացի: Աղայանի ուսալիզմը և նրա վեպի գեղարվեստական բարձր արժեքը: Աղայանի շահագործողների դեմ ունեցած ապստամբական տրամադրությունների արտահայտությունը նաև «Քյորովլի» հեքիաթում: Աղայանն իբրև հեքիաթադիր, ժողովրդական հեքիաթի մշակման նրա մեթոդը (համեմատել Թումանյանի հետ): Վերլուծել «Ծորք Անդեղ»-ը և «Արեգնապան»-ը: Աղայանի սոցիալական ուսուպիրան: «Արդար բաժանության» տեսակետը («Բաժանություն»):

Ն Յ Ո Ւ Թ Ե Ր

Յնլիու քույր (կրծատ)
Արեգնապան
Տորք Անդեղ.

Մանկական բանաստեղծություններ (Ճախարակ, Զմեռ, Հիշողություն, Հովվի անկողինը, Մանուշակ, Առավոտը գյուղում, Հնձվորներ):

5. Գաբրիել Սունդարելյան (1825—1912) (8 ժամ): Կենսագրական: Սունդարելյանն իրուն հայ խոշորագույն դրամատուրգ: Սունդարելյանի նախորդները: 70—90-ական թվականների հայ առետարական բուժքուազիայի կյանքի և կենցաղի պատկերը Սունդարելյան կոմեդիաներում: Գաղափար կոմեդիայի մասին, վորպես գեղարվեստական գրականության ժանրի: Սունդարելյանի ուսալիզմը և այդ ուսալիզմի ուժեղ քննադատական բնույթը: Սունդարելյանի մերկացումները: «Խաթաբալա», «Պեպո» և մյուս պիեսներում հանդես բերված՝ խարդախ միջոցներով հարստացող վաշխառուառեարական կեղենքիչների տիպերը՝ Զամբախով, Զիմզիմով, Փարսիկ և ուրիշներ: Սունդարելյանի սատիրան սրանց նկատմամբ և որյեկտիվորեն տրված ժիտական պատկերը: Սունդարե-

յանի ստեղծագործության բարձր գեղարվեստկան արժեքը: Սունդուկյանի կոմեդիաների ժամբային առանձնահատկությունները: Յեղողական և սուսական զբամատուրգիայի խոշոր վարպետների (Շեքսպիր, Մոլիեր, Ռատրովսկի և այլն) գրական կուլտուրայի և փորձի հաջող ոգտագործումը: Սունդուկյանի կոմեդիաների դրամատիկական արժանիքները (գործողության միասնություն, աշխուժ դիալոգներ և մոնոլոգներ, վարպետ խարակտերիստիկա և այլն):

Սունդուկյանի համակրանքը գեղի դեմոկրատիայի ներկայացուցիչները: Սունդուկյանի կոմեդիաները խորհրդային բեմի վրա և կինեմատոգրաֆիայի մեջ: Սունդուկյանի ստեղծագործության կապակցությամբ համառոտ ակնարկ ուսւագամատուրգ Ռատրովսկու մասին, հատկապես վերլուծելով նրա «Ամպրոպ» պիեսը:

Ն Յ Ո Ւ Թ Ե Ր

Գեղո (կրճատ)

Խաթարալա (կրճատ)

Քանդած ոջախ (հատված)

6. Հակոբ Պարոնյան (1842—1891) (8 ժամ): Տեղեկություններ Պարոնյանի ապրած ժամանակաշրջանի պոլսահայ հասարակական կյանքի մասին: Կենսագրական տեղեկություններ. Պարոնյանի նյութական շարունակ անապահով վիճակը: Սուլթանական կառավարության և հայ հոգևորականության կողմից կրած հալածանքները, նրա հրատարակած թերթերի հաճախակի արգելումը: Պարոնյանը վորապես հայ յերգիծաբանության խոշորագույն դեմք: Պարոնյանի խոշոր գերը հայ գրականության ոեալիստական ուղղության բարգացման պատմության մեջ:

Պարոնյանը վորապես ժողովրդի իսկական ապատության և յերջանիկ կյանքի իրականացմանը ձգտող հեղինակ: Բուրժուական ազգայնական ոեալիստին գաղափարախոսության և այլ գաղափարախոսություն արտահայտող ինտելիգենցիայի ներկայացուցիչների նկատմամբ Պարոնյանի ժխտական յերգիծանքը: Նրանց գործունեյության հակաժողովրդական եյության մերկացումը Պարոնյանի յերկերում: Մանը բուրժուական ինտելիգենցիաների և կենցաղի վարոշ յերկույթների նկատմամբ նրա հումորական վերաբերմունքը: Պարոնյանի յերգիծաբանությունը

իբրև միջադպային մեծություն: Նրա սատիրայի խորը քաղաքական բովանդակությունը, սուլթանիզմի, ցարիզմի և առնասարակ յեղուական կապիտալիստական գիշատիչ պետությունների նվաճողական և ժողովրդական ստրկացնելու քաղաքականության, դիպլոմատիայի կեղծության խիստ քննադատությունը և դատապարտությունը:

Պարոնյանի կիրառած գրական ժանրերը՝ յերգիծական նովել, վեպ, կոմեդիա և այլն: Պարոնյանի յերգիծաբանական պրիոնները: Պարոնյանի կոմեդիաները խորհրդային բեմի վրա: Պարոնյանի ստեղծագործության ոգտագործման խոշոր նշանակությունը մեր այսորվա յերգիծական գրականության մեջ: Համաշխարհային յերգիծական գրական կուլտուրայի՝ (Արքատովան, Մոլյեր) հաջող ոգտագործումը Պարոնյանի կողմից: Պարոնյանի թողած աղդեցությունը հայ գրողների վրա: Պարոնյանի ստեղծագործության կապակցությամբ՝ համառոտ ակնարկ ֆրանսիացի խոշոր գրամատուրգ Մոլյերի մասին, վերլուծելով նրա «Քաղենին աղմական» և «Ժորժ Դանդեն» կոմեդիաները:

Ն Յ Ո Ւ Թ Ե Ր

Մեծապատիվ մուրացկաններ (կրճատ)

Հոսոսի ձեռատետը (հատվածներ)

Ազգային ջոջեր (Արծրունի, Նար-պեյ)

Բաղդասար ախպար (հատվածներ)

Պետրոս Դուրյան (1851—1872) (5 ժամ): Կենսագրական տեղեկություններ: 60-ական թվականների պոլսահայ աշխատավորության տնտեսական քայլայումը և նրանց դժողովության աճումը տիրող կարգերի գեմ: Նալբանդյանի և Սվաճյանի կապը վորապես այդ իրողության ապացույցներից մեկը: Դուրյանի պոեզիան վորապես անդամադրձում քաղաքային գեմոկրատիայի ծանր գրության: Դուրյանի լիրիկայի թեմաները՝ սոցիալական բողոքի առկայություն, գիքախտ սեր, ըմբոստացում մահվան ու աստծո գեմ և համակերպում: Բանաստեղծության մեջ Դուրյանի բերած նորությունները՝ գրական աշխարհաբար լիզուն, վոճի պատկերագրությունը, իրական, կենդանի սիրո առկայությունը: Դուրյանի թողած աղդեցությունը հայ հետապա լիրիկայի վրա:

Ն Յ Ո Ւ Թ Ե Բ

Տրտունջ

Սիրել

Դրժել

Լճակի

Թրքուհին

Ներա հնատ

Մեռնե

Ինձի կսեն

Իմ մահը

Տ. Հովհաննիսես Հովհաննիսյան (1864—1929) (7 ժամ): Հ. Հովհաննիսյանի կենուագրությունը: Անցյալ դարի 80-ական թվականների գյուղացիության քայլայման արձականքները Հ. Հովհաննիսյանի բանաստեղծությունների մեջ:

Հովհաննիսյանի բողոքը կապիտալիզմի դեմ: Գյուղական ցեղերի և վաշխառության քննադատությունը վորպես հասարակական չարիքի («Գյուղի ժամը», «Հատիկ», «Մնաք բարով, արկ դարուն» և այլն):

Հայ ժողովրդի անազատ, ճնշված վիճակի և ազգային աղաւագրական ձգտումների արտահայտությունը Հովհաննիսյանի պլուղիայում («Հավատում եմ», «Հեղիկ կարկաչով», «Ասում են», «Ամենայն անգամ» և այլն):

Հ. Հովհաննիսյանի պեսիմիզմը վորպես տիրող հասարակարգի դեմ ուսնեցած դժգոհության և քայլայվող շերտերի փլրկությունը շտեմանելու արտահայտություն: Բարեգործության և քրիստոնեական սիրո քարոզը, վորպես միջոց հասարակական չարիքի դեմ: Այդ կապակցությամբ Հ. Հովհաննիսյանի աշխարհայացքի պահպանողական տարրերը: Աղդայնական խորթ արամագրությունների արտահայտություններ Հովհաննիսյանի միշտը բանաստեղծությունների մեջ:

1905 թվի հեղափոխության ընթացքում Հովհաննիսյանի բանաստեղծությունների մեջ ըմբռստացման մոտիվներ—«Պրոմեթեոսին»:

Հ. Հովհաննիսյանը վորպես հայ նոր քնարերգության նշանավոր դեմքերից մեկը: Բանաստեղծական ձևերի բազմազանությունը նրա ստեղծագործության մեջ: Հովհաննիսյանը վորպես լիդի և տաղաչափության ականավոր վարպետ:

Հովհաննիսյանի նշանակալից գերը հայ գրականության պատմության և մասնավորապես քնարական պոեզիայի զարգացման ասպարիգում: Նրա բանաստեղծությունների խոր հուզականությունն ու անկեղծությունը, ժողովրդական լեզվի և բանահյուսության վարպետ ոգտագործումն ու մշակումը, ժողովրդական մոտիվների հարազատությունը Հ. Հովհաննիսյանի բանաստեղծությունների մեջ՝ «Արագն եկավ լափին տալով», «Ալագյաղ բարձր սարին» և այլն:

Հ. Հովհաննիսյանի կրած ազգեցությունը ուռւսական պոեզիայից, մասնավորապես՝ Պուշկինից ու Լերմոնտովից: Հովհաննիսյունը, վորպես հմուտ թարգմանիչ և թարգմանական կուլտուրայի առաջին ականավոր ներկայացուցչիներից մեկը մեր պոեզիայի մեջ: («Յերգչի անեծքը», «Սպիտակ զգեստ, և այլն):

Ն Յ Ո Ւ Թ Ե Բ

Ենրկու ճանապարհ

Եւ ե գ ի ա,

Ակս ավելք ինձ

Վորպես հաղթանգամ

Գեղջկունու գարդը

Տիուլք յերգիչը

Յերանի նորան

Յես քեզ սիրում եմ

Յես անմոռնչ զնում եյի

Լինում ե բողե

Յերբ մատաղ մուսաս

Յես քեզ սիրեցի

Արտավազդ

Ասում են

Ամենայն անգամ

Թեղետ խեղգված եմ

Արագն եկավ

Փա փ ա գ

Դու յերևեցար

Անցիր սև ամպ

Աշուն

Հեղիկ կարկաչով

Հավատում եմ

Աահագնի ծնունդը

Ալեքսանդր Շատուրյան (1865—1917) (6 ժամ): Ալեքսանդր Շատուրյանի կենսագրությունը: Աշխատավորի ծանր վիճակի և արդար վաստակի յերգերը՝ վորպես Շատուրյանի ստեղծագործությունների հիմնական մոտիվ: Ալեքսանդր Շատուրյանի դեմոկրատական աշխարհայցքը («Թշվարին», «Ով ես դու յեղբայր», «Յերկրի մշակներ», «Սերմացան»):

Ալեքսանդր Շատուրյանի բողոքը կապիտալիզմի դեմ: Նրա մերկացնող քննադատությունը բուրժուազիայի, բուրժուական ինտելիգենցիայի և հոգեռականության նկատմամբ: Շատուրյանի յերգիծանքը՝ ուղղված հայ մեծատունների և բուրժուական ինտելիգենցիայի դեմ՝ («Գրչի հանաքներ»): Թախիծի առկայությունը Ալեքսանդր Շատուրյանի սիրո և բնության յերգերի մէջ:

Շատուրյանի աշխարհայցքի հետագա զարգացումը ուղղական գեմոկրատական հասարակական մտքի ազդեցության տակ: Շատուրյանի պոեզիայի լավագույնական տրամադրություններն ապագայի նկատմամբ՝ 1905 թվի հեղափոխության շրջանում: Խոսական հեղափոխության ազդեցությունը Շատուրյանի ստեղծագործությունների վրա: «Քանիզուհու որորը»՝ վորպես Շատուրյանի հեղափոխական տրամադրությունների արտահայտություն:

Շատուրյանը վորպես հայ քնարական պոեզիայի ականավոր ներկայացուցիչներից մեկը: Նրա չափածոյի բարձր կուլտուրան, աաղաչափական վարպետությունը, պարզ կառուցվածքը, պատկերավոր և հարուստ լեզուն, ձևերի բազմազանությունը: Շատուրյանի քնարերգության խոր հուզականությունն ու անմիջականությունը, զգացումների անկեղծությունը և ժողովրդական կյանքի ու հոգեբանության հարազատ պատկերումը: («Սերմացան», «Յերկրի մշակներ», «Նավափար» և այլն):

Ա. Շատուրյանի կրած ազդեցությունները Պուշկինից և Լերմոնտովից: Շատուրյանը վորպես լավագույն թարգմանիչ և նրա թարգմանությունների խոշոր գրական կուլտուրական նշանակությունը մեր գրականության պատմության համար:

Ն Յ Ո Ւ Թ Ե Ր

Իմ ուխտը
Տապանագիր
Գետակ,
Միթե արդեն

Մայր
Յես չեմ յերգում
Մի համբույր
Թշվարին

Ա. Վարդ	Յերկրի մշակներ
Մայր	Պոետին
Կյանք	Նավալար
Դնա ցուրտ ձմեռ	Նավորդներ
Մեր	Գիշերամուտի յերգերից
Մի վհատիլ	Բանվորուհու որորը
Յեկ գարնան անձրկ	«Գրչի հանաքներ»-ից՝
Պանդուխտի յերգը	Հեղտ ճամբա
Թե քեզ ոտար չե	Գայլ բարեպաշտ
Խաղ չե	Հայ հեղինակի աղօթքը:
Տուր ձեռքդ ընկեր	

ԲԵՐԱՆԱՑԻ ԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՆՁՆԱՐԱՎՈՂ ՆՅՈՒԹԵՐ

1. Սասունցի Գալիք.—(Մի քանի հատված՝ ուսուցչի ընտառությամբ):

2. Ֆ ր ի կ.—«Ընդդեմ ֆալաքին» (կրճատ):
3. Ք ու չ ա կ.—«Քառյակներ» (10 հատ):
4. Սալար-Նովա.—«Քյամանչա», «Դուն են գլխեն», «Քանի վուր ջան իմ»:
5. Մ. Նալբանդյան.—«Վազող ջրին», «Ապոլոնին»:
6. Գ. Սունգալյան.—«Խաթթաբալա» «Պեպո», (մոնոլոգներ):
7. Պ. Դուրյան.—«Սիրել», «Թրքուհին» «տրտունջ»:
- Հ. Հավիանելիյան.—«Յերկու ճանապարհ», «Արտավազդ», «Վորպես հաղթանամ» մի ծերուկ հսկա», «Հավատում եմ», «Անցիր սկ ամպ», «Յերբ մատաղ մուսաս»:
9. Ա. Շատուրյան.—«Իմ ուխտը», «Գետակ», «Թշվարին» «Յեկ գարնան անձրկ», «Խաղ չե», «Պոետին» «Տուր ձեռքդ ընկեր», «Յերկրի մշակներ», «Բանվորուհու որորը»:

ԱՐՏԱԴԱՍԱՐԱՆԱԿԱՆ ՀՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԳՐՔԵՐԻ Ց Ո Ւ Յ Ա Կ

1. «Սանա ծոեր» (մի քանի վարյանաւ ամբողջ)

2. Ֆ ր ի կ (ժողովածու)

3. Սալար-Նովա.—«Հայերեն խաղերի լիակատար ժողովածու»

4. Խաչտար Աբավյան.—«Վերք Հայաստանի»

5. Միբայել Նալբանդյան.—«Յերկու տող», «Յերկրագործությունը»:

6. Պերն Պոռըլան.—«Հացի խնդիր», «Ցեցեր», «Հունոն»:
7. Լազարոս Աղայան.—«Յերկու քույր», «Հեքիաթներ»:
8. Դարբիել Սունդուկյան.—«Պեպո», «Քանդած ոջախ», Վարինկի վեչերը»:
9. Հակիմ Պարանյան.—«Մեծապատիկ մուրացկաններ», «Կըսմիթներ», «Ազգային ջոջեր», «Բաղդասար աղբար»:
10. Պետրոս Դուրյան.—«Բանաստեղծություններ»:
11. Հ. Հավիտնիսյան.—«Բանաստեղծություններ»:
12. Ալեքսանդր Շատուրյան.—«Բանաստեղծություններ»:

**ԽՍՀՄ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՑԵՎ ՑԵՎՐՈՊԱԿԱՆ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ**

1. Ռուսքավելիի.—«Վագրենավորը»:
 2. Համերոս.—«Իլիականը և Վոոլիսականը»:
 3. Մոլեր.—Տարտյուֆ, Ագահը:
 4. Շիլեր.—Վիլհելմ Շելլը.
 5. Զ Ա Լ ա.—Ժերմինալ:
 6. Պուէլին.—Հայերեն հրատարակված բանաստեղծությունների և արձակի յերկատորյակը:
 7. Լերմանով.—Մեր ժամանակի հերոսը, Մծիրի:
 8. Գոգոլ.—Տարաս Բուլգար:
 9. Տուրգենևի.—Հայերեր և վորդիներ, Մումու:
 10. Մ. Գորկի.—Դանկոյի սիրութ: Մայրը:
 11. Սերաֆիմովիչ.—Յերկաթե հեղեղը:
 12. Ն. Ուստրովսկի.—Ինչպես եր կոփում պողպատը, Փոթուկածիններ:
-

ԶՐԴ ԴԱՍԱՐԱՆ

Քննադատական ռեալիզմ

Հասկացողություն քննադատական ռեալիզմի մասին: Քըննադատական ռեալիզմը Յելլոպայում և Ռուսաստանում—նրա ազդեցությունը հայ գրականության վրա: Ռեալիզմի զարգա-

ցումը հայ գրականության մեջ և. Արովյանից Պ. Պողյանից մինչև Ա. Շիրվանզադեն:

1. Ալեքսանդր Շիրվանզադեն.—(1858—1935) (10 ժամ): Ա. Շիրվանզադեյի կենսագրությունը:

Հայ բուրժուական հասարակության զարգացման պրոցեսի պատկերը Շիրվանզադեյի յերկերում: Շիրվանզադեն վորպես քննադատական ռեալիզմի խոշոր ներկայացուցիչը՝ մեր գրականության մեջ: Շիրվանզադեյի ռեալիզմը վորպես հայ գրականության զարգացման նոր ետապ. «Քառոս»: Գաղափար վեպի մասին, վորպես գեղարվեստական գրականության ժանրի: Այդ կապակցությամբ Ա. Շիրվանզադեյի կատարած պատմական դերը հայ վիպական գրականության զարգացման ասպարիզում: Շիրվանզադեյի ռեալիզմի որյեկտիվ քննադատական եյությունը: Բուրժուական հասարակության բարքերի քննադատությունը Շիրվանզադեյի յերկերում. «Քառոս», «Պատվի համար»: Լիբերալ ինտելիգենցիայի գործունեյության պատկերումը Շիրվանզադեյի վեպերում. «Արսեն Դիմաքսյան»: Դիմաքսյանը վորպես լիբերալ բուրժուական ինտելիգենցիայի հայ հին ասիական վաճառականության քննադատությունը. «Պատվի համար»: Ելիզարովը վորպես վարպետորեն մշակված կերպար: Արդյունաբերական բուրժուազիայի գործունեյությունը և բարեգործության քարոզ. «Քառոս» (Սմբատ Ալիմյանի, Միքայելի տիպերը): Բարոյական վերածնության խնդիրը, վորպես ընտանիքի փրկության միջոց ըստ Շիրվանզադեյի («Քառոս» և այլն): Ժողովրդական խավերի կյանքի պարզության դրվագումը, գրա հակագրումը բուրժուական բարքերին: Նահապետական հետամնացության, սնոտիապաշտության և անհատականությունը վոչնչացնող բռնակալական բարքերի քննադատությունը Շիրվանզադեյի յերկերում: Բարխուդարի, Սուսանի, Սեյրանի, Ռուստամի կերպարները («Նամուս», «Զար վոգի»): Բուրժուական եգորիզմի քննադատությունը: Բանվորության մարդասիրությունը, խիզախությունը, ընկերասիրությունը, ինտերնացիոնալ համերաշխությունը Շիրվանզադեյի յերկերում (Կարապետի, Զուլքրովի և Ռասուլի տիպերը):

Շիրվանզադեյի վեպերը, և զրամատիկական յերկերը վորպես գեղարվեստական մեծ ընդհանրացումներ: Կյանքի լայն ընդգրկումը, բուրժուական կյանքի աղտեղության, բարոյական անկման կասմիկ տիպականացումը: Տիպերի բազմակողմանիությունն ու տիպականությունը, հասարակական և անձնական կոնֆլիկտի

միավորումը սյուժեյի մեջ: Հակադրություններն ու բաղխումները՝ կուռ կոմպոզիցիան, ուժեղ դրամատիզմը վորպես վիճական խոշոր կուտուրայի արտահայտություն («Բառու»): Շիրվանզաղեյի լիրիզմը «Արտիստ» գրվածքում: Լևոնի կերպարը: Գաղափար դրամայի մասին, վորպես գեղարվեստական գրականության ժանրի:

Շիրվանզաղեն վորպես դրամատուրգ: Սունդուկյանի դրամատուրգիական ռեալիստական գծի շարունակությունը Շիրվանզաղեյի դրամաներում («Պատվի համար»): Շիրվանզաղեյի դրական լեզուն, վորպես դրամատուրգիայի զարգացման նոր ետապ:

1905 թվի հեղափոխությունից հետո Շիրվանզաղեյի կատարած եվլոյուցիան, ռեալցիայից կրած աղդեցությունը. («Կործանվածը»): Ռոմանտիզմի բնորոշ արտահայտությունները Շիրվանզաղեյի «Ավերակների վրա» և «Արմենունի» դրամաներում:

Շիրվանզաղեն վորպես խորհրդային գրող: Նրա գրական գործունեյությունը Հայաստանի խորհրդայնացումից հետո («Մորգանի խնամին» և այլն):

Շիրվանզաղեյի կրած աղդեցությունը Բալզակից, Ֆլորերից, Տոլստոյից և ավելի ուշ շրջանում՝ Զոլայից:

Ն Յ Ո Ւ Թ Ե Ր

1. Քառո (հատվածներ)
2. Նամուս (հատվածներ)
3. Պատվի համար (հատվածներ)
4. Արսեն Դիմաքսյան
5. Մորգանի ինամիդ:

2. Հավիանես Թումանյան.—(1869—1923) (10 ժամ): Հ. Թումանյանի կենսագրությունը:

Թումանյանը վորպես հայ ժողովրդի մեծ գեմոկրատ բանաստեղծ: 19-րդ դարի վերջին քառորդի և 20-րդ դարի սկզբի հայ հասարակական կյանքի մի շարք եյական կողմերի ընդհանուրացումները Հ. Թումանյանի ստեղծագործությունների մեջ: Թումանյանի մեծ ժողովրդասիրությունը: Ժողովրդական զանգվածները՝ վորպես Թումանյանի յերկերի հավաքական հերոսը: Աշխատավական լայն զանգվածների աղքային և դասակարգային հնչման ու հարստահարության և տիրող կարգերի դեմ ժողովրդական ըմբոստության ու բողոքի ցայտուն արտահայտությունը

վորպես Թումանյանի գեմոկրատիզմի հատկանշական դիմանակը, «Պարոդիա» («Իմ հայրենիքը տեսել ես, ասա»): «Հինորհնություն», «Թագավորն ու չարչին»:

Հ. Թումանյանը վորպես բուրժուական հասարակության հակառակորդ: Բուրժուազիայի, գյուղական ցեցերի, հոգեվորականության գիմազերծումը Թումանյանի յերկերում: «Գիքորը»: Գիքորի և բազաղ Արտեմի տիպերը: «Տերն ու ծառան», «Պոետն ու մուսան»:

Թումանյանի հումանիզմը, խաղաղասիրությունը և ժողովուրդների յեղբայրության քարոզը:

Թումանյանը 1905 թ. ոռուական հեղափոխության համակիր և ժողովուրդների յեղբայրական համերաշխության ջատագով: Թումանյանի նպայքարը հայութուրական ընդհարումների դեմ և նրա հաշտարար գերը: («Մենք այս ցած տմարդի կովով միանգամայն դուրս մնացինք Թուսաստանի ազատագրման մեծ կովից», Թումանյան):

Ժողովրդական յերջանկության իդեալի, աշխատավորի արդար վաստակի, հալալ հացի, սիրո, պարզության, աղատության, մարդասիրության հակադրումը բուրժուական բարքերին: «Փարվանա», «Հաղարան բլբուլ», «Քառյակներ», «Հեքիաթներ»:

Հետամնացության, տգիտության, ընտանեկան բռնակալության և կնոջ ստրկության խիստ քննադատությունն ու լուսավորականության քարոզը Թումանյանի յերկերում. «Մարոն», «Անուշ», «Լոռեցի Սաքոն», «Անիծած հարսը», «Նեսոյի քարաբաղնիսը»:

Մարոյի, Մոսու կերպարները վորպես հին գյուղի գյուղացիության տիպական ներկայացուցիչների: «Անուշ»ը վորպես 90-ական թվականների հայ կյանքի գեղարվեստական հանրագիտարան: Գաղափար պոեմի մասին, վորպես գեղարվեստական գրականության ժանր: Ժողովրդի կյանքն ու բանահյուսությունը վորպես Թումանյանի ստեղծագործությունների ակունքը: «Անուշ», «Սասունցի Դավիթը»: Թումանյանի պոեզիայի պարզությունն ու ժողովրդայնությունը, վորպես նրա ստեղծագործությունների ամենաարժեքավոր կողմը: Թումանյանը վորպես եպիկական ժանրի կլասիկ հիմնագիր: Թումանյանի պոեզիան վորպես մեր գրականության մեջ պատմական նոր ու բարձր ետապ՝ իր թեմատիկայով և արվեստով: Թումանյանի ստեղծագործությունների բազմաժամանակությունը: Պարզ ժողովրդական լեզուն,

բացառիկ պատկերավորությունը: Թումանյանի արձակը: Նրա նովիները վորպես սեղմ, պարզ արձակի կլասիկ հմտներ (Գիւքորը):

Ժողովրդական հեքիաթներ: Թումանյանը վորպես հայ մանկական գրականության մեջ վարպետն ու հիմնադիրներից մեկը: Թումանյանի կրած ազդեցությունը ոռւսական պոեզիայից Պուշկինից և Լերմոնտովից: Թումանյանը վորպես կլասիկ թարգմանիչ ոռւսական և յելլուպական հեղինակներից: Հոկտեմբերյան հեղափոխության ընդունումը Թումանյանի կողմից և նրա անցումը խորհրդային իշխանության կողմը: Նրա դործունեցությունն այս արջանում: Ս. Շահումյանի բարձր գնահատականը Թումանյանի ստեղծագործությունների մասին:

Ն Յ Ո Ւ Թ Ե Ր

Պանասեղծաւրյաւններ

- | | |
|-------------------------------|-----------------------------|
| 1. Հառաչանք (հատված) | 11. Պարուդիա |
| 2. Պոետն ու մուսան | 12. Գութանի յերգը |
| 3. Անուշ | 13. Համերգ |
| 4. Փարվանա | 14. Հին որհնություն |
| 5. Թմբկաբերդի առումը | 15. Վրաստանի համար |
| 6. Սասոնցի Դավիթը | 16. Քողաքարում յես վաղել եմ |
| 7. Թագավորն ու չարչին | 17. Քառյակներ |
| 8. Հազարան բլրուկ (հատվածներ) | 18. Մանուկն ու ջուրը |
| 9. Լոռեցի Սաքոն | 19. Հազարան բլրուկ (հատված) |
| 10. Մարդ | |

ՊԱՏՄԱԾԲՆԵՐ

1. Գիքորը
2. Ցեղեցերուն
3. Նեսոյի քարաբաղնիսը

ՀԵՔԻԱԹՆԵՐ

1. Տերն ու ծառան:

1. Մուրացան.—(1854—1908) (8 ժամ): Մուրացանի կենսագրությունը:

Գյուղացիության և քաղաքի աշխատավորական խավերի տնտեսական-հասարակական ծանր վիճակը կապիտալիստական հասարակության մեջ, վորպես Մուրացանի յերկերի հիմնական

թեման: Մուրացանի գյուղացիական գեմոկրատիզմը. «Առաքյալը», «Նոյի ագուավը»: Մուրացանի բացասական դերքը դեպի կապիտալիստական հասարակությունը: Այդ հասարակության քննադատությունը. «Առաքյալը»: Լիբերալ ինտելիգենցիայի բնուրուցիվ վարպետորեն պատկերումը (Պետրոս Կամսարյան): Բնության գեղեցիկ նկարագրությունը Մուրացանի յերկերում. «Առաքյալը», «Նոյի ագուավը»: Մուրացանի ուսալիզմը գյուղացիական թեմատիկա ունեցող յերկերում: Մուրացանի սոցիալական ուսուպիան և նրա ոռմանտիզմը: Խնտելիքենցիայի ուժքորմատուրական գործունեցությունը վորպես փրկության միջոց՝ ըստ Մուրացանի (Պետրոս Կամսարյան և քույր Աննա): Քույր Աննայի ոռմանտիկ նկարագիրը: Մուրացանի ուսուպիայի պահպանողականությունը և նրա հայացքների հակասությունները: Մի կողմից հին կարգերի քննադատությունը, իսկ մյուս կողմից բարոյդ: Բուրժուական քաղաքի քննադատությունը Մուրացանի յերկերում («Լուսավորության կենտրոն»): Մոմացանի կերպարը, վորպես բուրժուական ինտելիգենցիայի ծաղրանկարը: Սարյանի դրական տիպը և նրա ոռմանտիկ բնույթը: Մուրացանը վորպես ականավոր յերգիծաբան: Մոմճյանի և Պետրոս Կամսարյանի տիպերը վորպես յերգիծաբանական արժեքավոր կերպարներ: Քաղաքային աշխատավորական խավերի նյութական ծանր վիճակի նկարագրությունը Մուրացանի պատմվածքներում. «Հարուստները զվարձանում են», «Հասարակաց վորդեգիրը»:

Մուրացանը վորպես գրական մաքուր լեզվի և կառուցվածքի խոշոր վարպետ: Նրա նշանակալից դերը հայ գրականության պատմության մեջ:

Ն Յ Ո Ւ Թ Ե Ր

1. Առաքյալը (հատվածներ)
2. Նոյի ագուավը (կրծատ)
3. Հարուստները զվարձանում են
4. Հասարակաց վորդեգիրը:

4. Վարանես Փափազլան.—(1866—1920) (8 ժամ): Վրթանես Փափազլանի կենսագրությունը:

Վ. Փափազլանի ստեղծագործական եվլուցիան—ազգայնական մտայնությամբ տողորված ոռմանտիկական պատմվածքներից դեպի գյուղացիական դեմոկրատիզմի ու ուսալիզմը: Գյու-

զացիության քայլայման ու հողաղրկման պրոցեսի արտացոլումը վ. Փափաղյանի յերկերում: Գյուղացիական գեմոկրատիայի պաշտպանությունը Փափաղյանի մի շարք ստեղծադրությունների մեջ: Բողոքի արտահայտությունը ցարական չինովլիկության և կուլակության դեմ: «Ժայռ»: Գյուղական պատմվածքների շարքը (Հարեթ և Գրիգոր աղաների տիպերը): Այդ բողոքը վորպես ազգարային-գյուղացիական շարժման արտահայտություն Անդրկովկասյան գյուղում:

1905 թվի հեղափոխության ազեցությունը վ. Փափաղյանի յերկերի վրա. «Վիշապ»: վ. Փափաղյանի պարսկական կյանքից վերցրած վեպերում արտահայտած քննադատական վերաբերմունքը կղերաւ-ֆեոդական մտայնության և միապետության նկատմամբ: Ժողովրդական բունտարական տրամադրությունների արտահայտությունները «Ալեմդիր» գրվածքում: վ. Փափաղյանի ռեալիստական գրվածքներում լիբերալիզմի քննադատությունը: Փափաղյանի ստեղծագործության բազմաժանրությունը. նովելլա, ժամանակակից և պատմական վեպ, դրամա, նամականի: Փափաղյանը վորպես վարպետ նովելիստ: Փափաղյանի լեզվի: պատկերավորությունը նրա աշխատությունների մեջ արտահայտված ժողովրդական շերտերի կյանքի հարազատ կոլորիտն ու պարզությունը:

Ն Յ Ո Ւ Թ Ե Ր

- | | |
|------------------|-------------------------|
| 1. Ա ր տ ը | 6. Կորսված արդարություն |
| 2. Վ ի շ ա պ | 7. Մերկ գերվիշը |
| 3. Ըմբռութի մահը | 8. Ժայռ |
| 4. Լուր-դա-լուր | 9. Ալեմդիր |
| 5. Չըռչուքար | |

5. Ավետիս Իսահակյան.—(ճնկ. 1878 թ.) (10 ժամ) Ավետիս Իսահակյանի կենսագրությունը:

Ա. Իսահակյանի քնարերգության հիմնական մոտիվները—աշխատանք, սեր, գյուղական բնություն, ընթառացում և բողոք սոցիալական անհավասարության և անարդարության դեմ. «Ալիմեր սիրտը»:

Ազգայնական մտայնության վորոշ արտահայտությունն Իսահակյանի ստեղծագործության մեջ (վորոշ շրջանում):

Իսահակյանի հոռեստեսությունը, կապիտալիզմի պայմաններում քայլացվող աշխատավորական շերտերի համար փրկության հեռանկար չտեսնելու արտահայտություն, ատելություն գեղի բուրժուական հասարակությունը, բուրժուական հայրենիքը, իրավունքը, ընտանիքը, կրոնը և այլն («Աբու-Լալա-Մահարի»):

Իսահակյանի ստեղծագործությունների մեջ շեշտված անհատապաշտությունը 1905 թվի հեղափոխության հաջորդող սեակցիայի տարիներին: Աբու-Լալա-Մահարու կերպարը: «Աբու-Լալա-Մահարի»:

Ավետիս Իսահակյանի պոեզիայի ժողովրդականությունն ու պարզությունը: Հայ ժողովրդական նպասի մշակումը Ավ. Իսահակյանի կողմից («Սամանա Մէկեր»): Ժողովրդական կյանքն ու կենցաղը վորպես Իսահակյանի ստեղծագործության ակունքը: Իսահակյանի պոեզիայի որգանական կապը ժողովրդական բանահյուսության հետ: Ա. Իսահակյանը, հայ քնարերգության մեծ վարպետ, նրա պարզ լիդուն, բանաստեղծության պարզ կառուցվածքը, բացառիկ պատկերավորությունը, կենցաղային վառ կուրրիտը, բանաստեղծական ձևերի բազմազանությունը: Նրա սիրացին լիբերալիզմի բարձր կուլտուրան, վարպետ տաղաչափությունը և խոր հուզականությունը:

